Ազգ
Azg
25 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2009 ՈՒՐԲԱԹ 172 (4314)
ISSN: 1829-1651

# Ցեղասպանությունը ժխտողները 2010 թվականից Եվրոպայում քրեական պատասխանատվության կենթարկվեն

Եվրոմիության արդարադատության եւ ներքին գործերի խորհուրդը դեռ 2008 թվականի նոյեմբերի վերջին շրջանակային որոշում էր ընդունել՝ «Պայքար ռասիզմի որոշ ձեւերի եւ այլատյացության դեմ» վերնագրով, որտեղ ներառված էր նաեւ հոդված՝ ցեղասպանության հերքումը որպես քրեորեն պատժելի արարք դիտարկելու վերաբերյալ: Այսինքն՝ ցեղասպանության ժխտողները, ըստ այդ որոշման, կենթարկվեն քրեական պատասխանատվության: Եվրոմիության երկրները մինչեւ 2010 թվականը իրենց օրենսդրությունները պետք է համապատասխանեցնեն այս շրջանակային որոշման պահանջներին, իսկ դրանից հետո արդեն ցեղասպանության հերքման կանխումը կախված կլինի այս օրենսդրության կիրառումից:

# Նախագահի համահայկական ուղեւորությունից առաջ հանդիպում ՀՀ նախագահի եւ Ամենայն հայոց հայրապետի միջեւ

Երեկ նախագահ **Սերժ Սարգսյանը** հանդիպել է, **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն հայոց կաթողիկոսին**:

Նախագահն ու Վեհափառը քննարկել են պետություն-եկեղեցի հարաբերություններին, ինչպես նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի ներկա զարգացումներին վերաբերող հարցեր:



Նախագահ Սարգսյանն ասել է, որ գործընթացը թեւակոխել է մի շատ կարեւոր՝ հասարակական-քաղաքական քննարկումների փուլ: Սերժ Սարգսյանը նշել է, որ գնալով ընդլայնվող քննարկումներն ինքնին շատ օգտակար են, քանի որ, անկախ այն բանից՝ հրապարակված արձանագրությունները կստորագրվեն՝ թե ոչ, կվավերացվեն, թե ոչ, քննարկումները լավ հարթակ են՝ խոսելու մեր հարաբերությունների եւ խնդիրների մասին: «Իհարկե, դրանցում կան հուզական երեւույթներ եւ տարբեր, եւ այլ կերպ լինել չի էլ կարող, քանի որ մեր ժողովրդի մի հսկայական հատված ցեղասպանության ենթարկված մարդկանց սերունդ է: Բացի այդ, սահմանից այն կողմ մեր սրբություններն են, մեր եկեղեցիներն են, մեր մայրաքաղաքն է, իսկ շատ շատերի՝ նաեւ պապենական տների մնացորդները: Ես սա հասկանում եմ, քանի որ շատ պարագաներում ինքս էլ ներքուստ պայքարում եմ իմ հույզերի հետ: Բայց, այդուհանդերձ, համոզված եմ, որ այս քննարկումներն անհրաժեշտ են», ասել է երկրի ղեկավարը:

Սերժ Սարգսյանն Ամենայն հայոց կաթողիկոսին տեղեկացրել է, որ հոկտեմբերի մեկից մեկշաբաթյա այցելությունների շարք է սկսելու Փարիզի, Նյու Յորքի, Լոս Անջելեսի, Բեյրութի ու Դոնի Ռոստովի հայկական մեծ գաղթօջախներ՝ լսելու տեղի եւ համեմատաբար մոտ գտնվող այլ գաղթօջախների հայության կարծիքն ու տեսակետները հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ:

Գարեգին Երկրորդը ողջունել է նախագահի համահայկական ուղեւորության նախաձեռնությունը: «Սփյուռքը մեր ժողովրդի կարեւոր եւ անբաժանելի մասն է, եւ ճիշտ է, որ սփյուռքի մեր զավակները, ովքեր այս օրերին նույնպես բուռն քննարկում են հայ-թուրքական նախաստորագրված փաստաթղթերը, հնարավորություն ունենան անձամբ Ձեզանից պատասխաններ լսելու իրենց հուզող հարցերի վերաբերյալ, ինչպես նաեւ Դուք հաղորդ դառնաք սփյուռքի մեր զավակների մտածումներին, տեսակետներին եւ մտահոգություններին», ասել է Վեհափառը:

Կաթողիկոսը հայտնել է, որ Գերագույն հոգեւոր խորհուրդն առաջիկա նիստում քննարկելու է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը, նախաստորագրված փաստաթղթերը եւ հանդես է գալու համապատասխան հայտարարությամբ:

«Մեծարգո նախագահ, մաղթում ենք Ձեզ հաջողություններ: Աստծո օրհնությունն ու օգնականությունը Ձեզ այս կարեւոր ճամփին», ասել է Վեհափառը:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ

## ԳԱԱ ընդհանուր ժողովը հավանություն է տվել

**Սեպտեմբերի 23-ին ԳԱԱ ընդհանուր ժողովը քննարկեց հայ-թուրքական հարաբերությունների ներկա գործընթացը եւ որոշեց հավանություն տալ վերջին շրջանում ՀՀ ղեկավարության վարած քաղաքականությանը՝ ուղղված հարեւանների հետ հարաբերությունների կարգավորմանը եւ Հայաստանը շրջափակումից դուրս բերելուն: Ընդհանուր ժողովի որոշման մեջ նշված է, թե առանց նախապայմանների Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը եւ հայ-թուրքական սահմանի բացումը կնպաստի Հայաստանի աշխարհագրական դիրքի ուժեղացմանը, եւ նախաստորագրված փաստաթղթերը հիմք են ստեղծում այդ քաղաքականությունը շարունակելու համար, իսկ ընդհանուր ժողովի մասնակիցները հավաստացած են, որ ՀՀ դիվանագիտությունը Թուրքիայի հետ հարաբերություններում հետամուտ կլինի մեր ազգային կարեւոր խնդիրների լուծմանը:**

**Այս հաղորդագրությունը տարածվել էր երեկ:**

## Հայ-թուրքական թեմայով լսումները՝ հոկտեմբերի 1-ին

ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը հոկտեմբերի 1-ին, ժամը 11:00-ին կազմակերպում է «Նախաստորագրված արձանագրությունները եւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացը» թեմայով խորհրդարանական լսումներ: Լսումները նպատակ ունեն քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների, քաղաքական հետազոտական կենտրոնների ներկայացուցիչների եւ փորձագետների մասնակցությամբ բազմակողմանի քննարկում իրականացնել հրապարակված փաստաթղթերի հիման վրա Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ նախաձեռնվող գործընթացի վերաբերյալ:

ՀԱՄԱՌՈՏ

## «Հայաստանի հետ հաշտեցումը Էրդողանի եւ Բան Կի Մունի հանդիպման օրակարգում»

Երեկ վարչապետ Էրդողանը «Պրինստոն» համալսարանում ունեցած ելույթից հետո հանդիպել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի հետ: Հանդիպմանը քննարկվել են Կիպրոսին, Մերձավոր եւ Միջին Արեւելքին, Աֆղանստանին առնչվող խնդիրներ:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը Թուրքիայի վարչապետին շնորհավորել է Կիպրոսի հիմնահարցի խաղաղ կարգավորման բանակցություններին նպաստելու եւ միջազգային ասպարեզում ցուցաբերած խաղաղարար ջանքերի համար: Այնուհետեւ նա վարչապետ Էրդողանին ասել է, որ գոհունակությամբ է ընդունում Հայաստանի հետ Թուրքիայի հարաբերությունների նորմալացմանը միտված նոր քայլերը:

Հ. Չ.

## Թեհրան-Երեւան վթարված ինքնաթիռի սեւ արկղերի տեղեկատվության կեսը վերծանված է

Հուլիսի կեսերին իրանական Ղազվին քաղաքից ոչ հեռու Թեհրան-Երեւան չվերթի վթարի ենթարկված Տու-154Մ ինքնաթիռի սեւ արկղերի տեղեկատվության կեսը վերծանվել է: Իրանական SNA գործակալությունը, որպես ինֆորմացիայի աղբյուր ներկայացնելով ավիավթարի հետաքննությամբ զբաղվող խմբի ղեկավար Ահմադ Մաջիդին, տեղեկացնում է, որ թռիչքի տեխնիկական պարամետրերի գրանցման ձայնագրությունների հետաքննությունը հնարավորություն է տվել ստանալու տեղեկատվության ավելի քան 50 տոկոսը: Ներկայում մասնագետները զբաղված են մնացած տեղեկատվության վերծանմամբ:

Հայտնաբերված ձայնագրությունները լրջորեն վնասված են, սակայն մասնագետներն արել են հնարավոր ամեն ինչ դրանք վերծանելու եւ աղետի պատճառները որոշելու համար:

Հ. Հ.

## Ավտովթար Ռուբինյանց եւ Ծարավ Աղբյուր փողոցների խաչմերուկում

**Սեպտեմբերի 24-ին, ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է ստացվել, որ ժամը 9-ի սահմաններում, Ռուբինյանց եւ Ծարավ Աղբյուր փողոցների խաչմերուկում Ռուբիկ Պ.-ի վարած «ՄԱԶ 504» մակնիշի ավտոմեքենան ընդհարվել է «Մերսեդես-Բենց» մակնիշի ավտոմեքենային, այնուհետեւ ընդհարվել «ԳԱԶ-322132-220» մակնիշի թիվ 38 երթուղու միկրոավտոբուսին, որն էլ ընդհարվել է «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենային:**

**Վթարի հետեւանքով «Օպել Աստրա» ավտոմեքենայի վարորդ Արամ Ս.-ն եւ «ԳԱԶ-322132-220» միկրոավտոբուսի 6 ուղեւորներ ստացել են մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն: Միկրոավտոբուսի վարորդը եւ մեկ ուղեւոր առաջին բուժօգնությունը ստանալուց հետո գնացել են տուն:**

**Քննությունը վարում է ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քննչական վարչության ԾՏՀ քննչական բաժինը:**

Ս. Ս.

## Ստեփանակերտում օդանավակայան է կառուցվում

**Արցախում քաղավիացիայի հեռանկարների մասին վաղուց էին խոսում: Վերջերս այդ խոսակցությունները դարձան իրատեսական, երբ ԼՂՀ ԱԺ-ին ներկայացվեց ԼՂՀ քաղավիացիայի մասին օրինագիծ, որին հաջորդեցին Ստեփանակերտում մեկնարկած օդանավակայանի շինարարական աշխատանքները:**

**«ԱրմԱր»-ի փոխանցմամբ՝ Երեւանում ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանն անցկացրել է խորհրդակցություն, որտեղ հստակեցվել է, որ Երեւան-Ստեփանակերտ օդային կամուրջը պետք է ապահովվել ինքնաթիռներով: Նախագահը ցանկություն է հայտնել, որ կառուցվելիք օդանավակայանը դառնա Արցախի լավագույն այցեքարտը: «Արմավիա» ընկերության սեփականատեր Միխայիլ Բաղդասարովն էլ տեղեկացրել է, որ ինքնաթիռն արդեն ձեռք է բերվել. Երեւան-Ստեփանակերտ չվերթերը կսկսվեն օդանավակայանի պատրաստ լինելուն պես:**

Հ. Հ.

## Քննիչ է ձերբակալվել

**Ազգային անվտանգության ծառայությունը ձերբակալել է Արաբկիրի քննչական բաժնի քննիչ Բաբկեն Մարդոյանին: Մարդոյանին ձերբակալել են հանցագործ մի խմբի վերաբերյալ իր վարույթում եղած քննչական գործում ցուցմունքներ փոխելու համար, ինչը նա արել է, որպեսզի հանցագործները մեղմ պատիժ ստանան եւ համաներման տակ ընկնեն:**

## Սումգայիթում ադրբեջանցիների վայրագությունները վկայող փաստերը կտեղադրվեն համացանցում

ՀՀ գլխավոր դատախազությունը հրապարակայնացնում է 1980-ականների վերջերին Ադրբեջանում, մասնավորապես, Սումգայիթում բնակվող հայերի նկատմամբ իրականացված զանգվածային բռնությունների դեպքերի առթիվ ՀԽՍՀ դատախազությունում քննված քրեական գործերի նյութերը: Դրանց հիմքում կստեղծվի էլեկտրոնային արխիվ, որին ծանոթանալու հնարավորություն կընձեռվի լայն հասարակությանը: Էլեկտրոնային արխիվում քրեական գործի նյութերի հետ մեկտեղ, կտպագրվեն տեղի ունեցած ջարդերի, բռնությունների վերաբերյալ վկայությունները: Արխիվի նյութերն օգտակար կլինեն ոչ միայն պատմագիրներին, այլեւ քաղաքական գործիչներին եւ հասարակության լայն շրջանակներին՝ ճիշտ ընբռնելու եւ գնահատելու պատմական իրադարձությունները:

Դատախազությունը արխիվի ստեղծման աշխատանքներն իրականացնում է «Այլատյացության կանխարգելման նախաձեռնություն» ՀԿ-ի հետ համատեղ: Ամենայն հավանականությամբ 2-3 ամսից արխիվը կունենա ամբողջական տեսք եւ կտեղադրվի համացանցում: Էլեկտրոնային արխիվ ստեղծելու գաղափարը հասունացավ, երբ «Այլատյացության կանխարգելման նախաձեռնություն» ՀԿ-ն գրավոր դիմեց գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու եւ անհրաժեշտության դեպքում գրառումներ կատարելու թույլտվությամբ: Հաշվի առնելով պատմական իրադարձություններն ու հասարակության հետաքրքրությունը՝ դատախազությունը որոշեց օժանդակել ու Սումգայիթում զանգվածային բռնությունները վկայող պատմություններն ու ականատեսների վկայությունը հանձնել միջազգային հասարակության դատին:

Հայաստանի դատախազության արխիվում նյութերն ամբողջությամբ չեն պահպանվել, քանզի դրանցից անջատված առանձին գործեր ուղարկվել են Ադրբեջան եւ Ռուսաստան, որտեղ ոճրագործության անմիջական մի քանի մասնակիցներ, պատանություններ իրականացրած մի քանի անձիք դատապարտվել են տարբեր պատժաչափի՝ ընդհուպ մահապատժի:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ճնշման ձեւերը արդյունքներ չեն տա

## *ԼՂՀ ԱԳՆ նախարար Գեորգի Պետրոսյանի հարցազրույցը թուրքական NTV հեռուստաալիքի թղթակցին*

«Մենք բազմաթիվ անգամ հայտարարել ենք, որ պատրաստ ենք Ադրբեջանի հետ նստել բանակցությունների սեղանի շուրջը եւ տարբեր հարցեր քննարկել, բայց, դժբախտաբար, Ադրբեջանը ինչ-ինչ պատճառներով հրաժարվում է: Գուցե, հիմնավորումներ ունի, բայց, իմ կարծիքով, Ադրբեջանը մեզ հետ անմիջական հարաբերություններից այդքան համառորեն հրաժարվելու հիմնավորում չունի:

Բազմիցս ասել ենք, որ առանց ԼՂՀ ժողովրդի կարծիքը հաշվի առնելու հազիվ թե կարգավորումը արդյունավետ ելք ունենա», թուրքական հեռուստաալիքի թղթակցին ասել է ԼՂՀ արտգործնախարարը:

Ղարաբաղյան խնդրի թեման շարունակելով՝ ԼՂՀ արտգործնախարարն ասել է. «Այդ կնճռոտ կետերը վերաբերում են ընդհանրապես ոչ միայն հայությանը, հայկական աշխարհին: Ղարաբաղի հետ կապված իրադարձությունների վերաբերյալ ասեմ, որ նորագույն պատմության շրջանում էր, երբ Ղարաբաղի ժողովուրդը քաղաքական հարց բարձրացրեց: 1988 թվականից՝ փաստորեն Խորհրդային Միության փլուզման նախաշեմին, մենք ստացանք շատ ծանոթ իրադարձություններ Ադրբեջանի տարածում՝ կապված հայկական բնակչության հետ: Անշուշտ, կրքերը նորից բորբոքվեցին, վերքերը բացվեցին, եւ եթե դա նախապատրաստական քայլ չէր ցեղասպանության իրականացման, ապա ի՞նչ էր: Հիմա առկա են տարբեր մեկնաբանություններ այդ հարցերի շուրջը՝ պաշտոնական, հումանիտար եւ այլն: Դրանք այն խնդիրներն են, որ բավականին լուրջ ազդում են մարդկային հիշողությունների, ապագա քաղաքականության եւ ապագայում նորմալ հարեւաններ լինելու հնարավորությունների վրա: Պարզ փաստ է, որ այս տարածքից ոչ մեկը չի հեռանալու: Այս տարածքում պետք է ընդհանուր եզրեր գտնել, որոնք որ պետք է հիմնվեն թե՛ մարդկային իրավունքների վրա, եւ թե՛ ընդհանրապես ժողովրդի իրավունքի վրա. սա է ամենակարեւորը»:

Թղթակցի մեկ այլ հարցի, թե որպես Ղարաբաղի արտգործնախարար, Թուրքիային ի՞նչ կարող է հորդորել, խորհուրդ տալ Գեորգի Պետրոսյանը, վերջինս պատասխանել է. «Ես դժվարանում եմ ներկա պահի դրությամբ կողմնորոշվել խորհուրդ տալու իմաստով: Սակայն, համենայն դեպս, չմոռանանք, որ հայությունը եւ Թուրքիան ունեն բազմաթիվ խնդիրներ եւ բարդ հանգույցներ, որոնք այսօրվա վիճակում ազդում են մեր առօրյա կյանքի վրա: Ես կուզենայի, որ մերձեցման գործընթացը ոչ թե շահարկվի, այլ, ժողովուրդների միջեւ նույնպես լուրջ բանակցություններ, շփումներ իրականացվեն, որ կարողանանք ամեն մեկս հասկացնել, ճշգրտել մեր դիրքորոշումները , հասկանալ իրար:

Մենք տեսնում ենք, որ Թուրքիայի ամենաբարձր պաշտոնյաները շատ ուղղակի ձեւով այս երկու՝ Ղարաբաղի խնդիրը եւ հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը փորձում են իրար կապել: Այն չի նպաստի Ղարաբաղի խնդրի կարգավորմանը, որովհետեւ ակնհայտ է, որ Թուրքիան սեփական խոստումների պատանդն է, որոնք ժամանակին տվել է Ադրբեջանին եւ այսօր էլ կատարում է, եւ սա շատ ուղղակի հստակ ցույց է տալիս, որ Ադրբեջանը ճնշում է գործադրում: Ուզենաս, թե չուզենաս, Թուրքիան դառնում է շահագրգիռ կողմ: Սա նույնպես ընկալվում է որպես ճնշման ձեւ, բայց ճնշման ձեւերը հազիվ թե դրական արդյունքներ ապահովեն»:

**Ն. Ս.**

# Խոսք զգուշացման

***ՌԱԿ Մ Նահանգների եւ Կանադայի շրջանային կոմիտեն սեպտեմբերի 12-ի «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում հրապարակել է հետեւյալ «զգուշացման խոսքը», որը ներկայացնում ենք թարգմանաբար:***

Հայ-թուրքական հարաբերություններում վերջերս կատարված շրջադարձը միջոցառումների խառնաշփոթ է առաջացրել աշխարհով մեկ: Հայաստանի, Թուրքիայի եւ Շվեյցարիայի արտգործնախարարների օրերս հրապարակած արձանագրությունները ներկայացնում են սոսկ մի ճանապարհային քարտեզ, որը պետք է առաջնորդի Հայաստանին եւ Թուրքիային հուզող հարցերի վերաբերյալ վերջնական կարգավորում գտնելուն նպատակաուղղված բանակցությունների անցկացմանը:

Այդ բանակցությունների հետեւանքը կանխատեսելն ու սփյուռքում դրա շուրջն աղմուկ բարձրացնելը կարող են ծառայել միայն հայերի շրջանում շփոթ եւ բաժանում առաջացնելուն:

Փորձելով առաջ տանել իր օրակարգային խնդիրները, Դաշնակցության կուսակցությունը հավաքներ է կազմակերպում եւ չթույլատրված միջոցների դիմում՝ ստեղծելու համար այն տպավորությունը, որ իր գործունեությունը վայելում է նաեւ ամբողջ համայնքի պաշտպանությունը: Այսպես, սեպտեմբերի 4-ին եւ 9-ին համապատասխանաբար Տորոնտոյում եւ Մոնրեալում անցկացված հավաքների ժամանակ հնչում էին կոչեր, որ նրանց պաշտպանում են Ս. Դ. հնչակյաններն ու Ռամկավար ազատական կուսակցությունը:

Ինչ վերաբերում է ՌԱԿ-ին՝ Արեւելյան Ամերիկայի եւ Կանադայի օրինական ձեւով ընտրված շրջանային կոմիտեին, որի իրավասության տակ են գտնվում վերոնշյալ երկու մասնաճյուղերը, նշենք, որ նա երբեք չի պարտավորվել գործել դաշնակցության օրակարգին համաձայն: Այն անհատները, որոնք մասնակցում են այդ հավաքներին, մեր կազմակերպությանը չեն ներկայացնում: Նրանք փոքրամասնություն են, որոնց առաջնորդում է կուսակցությունից վտարված անդամ Մայք Խարաբյանը, որը, վստահաբար, ինչ-որ անձնական շահեր է հետապնդում՝ ի չարս օգտագործելով կուսակցության բարի անունն ու հեղինակությունը:



# Մայր աթոռի բարձրագույն շքանշանը Մկրյան ամուսիններին

**Մայր աթոռ սուրբ Էջմիածնի վեհարանը մարդաշատ էր: Առիթը՝ ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքից Հայաստան ժամանած տեր եւ տիկին Բաբկեն եւ Անահիս Մկրյանների պատվում էին արժանվույն: Գարեգին վեհափառ հայրապետի հետ վեհարանի մեծ դահլիճ մտան հոգեւորականներ ու հոգեւոր երաժշտության ներքո ներս բերեցին այն մասունքարանը, որի ժանյակավոր թաշկինակի վրա դրված էր Ամենայն հայոց հայրապետի կոնդակն ու շքանշանը: Ամերիկայի Արեւելյան թեմի**



**առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, դիմելով ներկաներին ներկայացրեց հավաքի նպատակը, որի ընթացքում հայ եկեղեցու արժանավոր զավակներ տեր եւ տիկին Մկրյանները Վեհափառ հայրապետի սրբատառ կոնդակով արժանացան Մայր աթոռի բարձրագույն պարգեւին՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանին:**

**«Թեմական խորհրդի գործուն անդամ է Բաբկեն Մկրյանը եւ նաեւ ազգային կյանքում իբրեւ Ռամկավար ազատական կուսակցության Ամերիկայի շրջանի ղեկավարներից մեկը հարգված եւ սիրված անձնավորություն է բոլորի կողմից», ասաց արբազանը:**

**Գրականագետ, քաղաքական եւ հասարակական գործիչ Երվանդ Ազատյանը ներկաներին մանրամասն տեղեկացրեց Մկրյան ամուսինների կյանքն ու գործունեությունը եւ նշեց. «Բաբկեն ու Անահիս Մկրյանները Ֆիլադելֆիայում մեր ազգային առաջնորդարանն են, մեր դեսպանատունն են, մեր սրտի եւ մտքի խոսնակն են, ուր բազմաթիվ հոգեւոր առաջնորդներ, մտավորականներ, դիվանագետներ եւ համեստ հայեր, որոնք աշխատանքի նպատակով գտնվում են Ֆիլադելֆիայում, մշտապես վայելել են իրենց ջերմ ընդունելությունն ու հյուրասիրությունը: Մկրյան ամուսինները ոչ միայն Ֆիլադելֆիայում, այլեւ աշխարհի տարբեր հայ գաղթօջախներում իրենց բարերար դերն են կատարում, լինի դա Թուրքիայում, Վրաստանում, Ջավախքում եւ այլուր»..**

**Սրբագիր կոնդակը ընթերցվեց, որից հետո Վեհափառ հայրապետը տեր եւ տիկին Բաբկեն եւ Անահիս Մկրյանների կրծքին ամրացրեց շքանշանները ու փոխանցեց կոնդակը:**

**Հուզված էին շքանշանակիր ամուսինները: Պրն Մկրյանն իր ջերմ երախտագիտության խոսքը հղեց Վեհափառ հայրապետին, նման բարձր պարգեւի իրենց արժանացնելու համար: «Մեր մանկությունից մեր նախնիներն ու ծնողները մեր մտքի ու հոգու մեջ դրոշմել են Ս. Էջմիածնի բազմակողմանի նշանակությունը, հետեւաբար մեզ համար Ս. Էջմիածնին ու նրա ենթակա եկեղեցիներին ծառայելը դարձել է մեր բնական կյանքի մեկ մասը, մեր սրտի տուրքը մեր պատմությանը եւ մեր Աստծուն»:**

**Վեհափառ հայրապետը օրհնության խոսք հղեց առ Աստված, որ միշտ նրա աջը պահի ու պաշտպանի նվիրյալ հայորդիներին, մաղթեց երկար կյանք ու երջանկություն, որպեսզի նոր ուժով նոր խանդավառությամբ լցված շարունակեն իրենց ծառայությունն ու հրավիրեց շնորհավորելու այդ կարեւոր իրադարձությունը հայկական անուշահամ կոնյակով:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Մահացել է Ռոբերտ Սահակյանցը

Այսօր Երեւանում մահացել է հայ տաղանդավոր անիմատոր Ռոբերտ Սահակյանցը, հաղորդում է Panarmenuan.net-ը: Մահը վրա է հասել սրտի բարդ վիրահատությունից հետո: Ռոբերտ Սահակյանցը ծնվել է 1950թ-ն Բաքվում: 1964թ-ից ապրել է Երեւանում, որտեղ ավարտել է միջնակարգ դպրոցը, իսկ 4 տարի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը հաճախելուց հետո 1972-ին հեռացվել է՝ դասերին չհաճախելու պատճառով: Բայց այդ ժամանակ նա արդեն աշխատում էր (1970-ից) «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ որպես նկարիչ եւ մուլտիպլիկատոր, իսկ 1972-ից ռեժիսոր եւ մուլտիպլիկատոր: Ռոբերտ Սահակյանցը հանդիսացել է իր գրեթե բոլոր ֆիլմերի սցենարի հեղինակը եւ բեմադրող ռեժիսորը: Իր ֆիլմերի ընդհանուր թիվը հասնում է 30-ի (եթե հաշվի առնենք նաեւ ավանդական 10 կամ 30 րոպեանոց ֆիլմերը, ինչպես նաեւ այն ֆիլմերը, որոնք նկարահանվել են OPT-ի եւ Հայկական հեռուստատեսության համար, ապա ֆիլմերի թիվը հասնում է հարյուրի): Ռոբերտ Սահակյանցը նաեւ «Հայֆիլմի» նկարահանած անիմացիոն այլ ֆիլմերի համահեղինակ է: Նրա ֆիլմերն արժանացել են մրցանակների միջազգային եւ համախորհրդային կինոփառատոներում. Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, ինչպես նաեւ Կիեւում, Երեւանում, Մոսկվայում եւ Տալլինում: 2007-ին արժանացել է Հայաստանի ԹՄՄ մրցանակին:

# Հայաստանի եւ Լեհաստանի միջեւ համագործակցությունը պետք է խորացնել

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանը սեպտեմբերի 24-ին ընդունել է Լեհաստանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ եւ եվրոինտեգրման հարցերով պետքարտուղար Միկոլայ Դովգելեւիչին:**

**Զրուցակիցները քննարկել են հայ-լեհական երկկողմ հարաբերություններին վերաբերող հարցեր: Երկուստեք կարեւորվել է Հայաստանի եւ Լեհաստանի միջեւ տարբեր ուղղություններով համագործակցությունը խորացնելու անհրաժեշտությունը:**

**Պայմանավորվածություն է ձեռք բերվել սերտորեն համագործակցելու Հայաստանի եվրոինտեգրման ճանապարհին հայ-լեհական փորձի փոխանակման ուղղությամբ: Միկոլայ Դովգելեւիչը պատրաստակամություն է հայտնել լեհական փորձի օրինակով աջակցելու Հայաստանում տեղեկատվական կենտրոնների ստեղծմանը:**

**Քննարկվել է նաեւ Հայաստանի եւ Լեհաստանի միջեւ մուտքի արտոնագրերի ստացման պարզեցված համակարգի ձեւավորման հնարավորությունը: Միկոլայ Դովգելեւիչն իր աջակցությունն է հայտնել այս գործընթացին:**

**Անդրադարձ է եղել նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրին. Արթուր Բաղդասարյանն ասել է, որ Հայաստանը ձգտում է առանց նախապայմանների կարգավորել Թուրքիայի հետ հարաբերությունները:**

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ**

# Կովկասի ինստիտուտի դեմ հայցն առայժմ վերադարձվել է հայցվորին

**«Կովկասի ինստիտուտ» հիմնադրամի դեմ հայցը երեկ Կենտրոն, Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը վերադարձրել է հայցվորին՝ «Արարատ» ռազմավարական կենտրոնին, քանի որ հայցի պետտուրքն ամբողջովին չի վճարվել, իսկ հայցին կից փաստաթղթերը միայն անգլերենով են եղել: Հայցը վերաբերում էր Կովկասի ինստիտուտի հրատարակած ժողովածուում Այբարս Գյորգուլուի «Թուրքիա-Հայաստան հարաբերություններ. հավերժական փակուղի՞» հրապարակմանը, որն ավելի վաղ որպես զեկույց նա ներկայացրել էր Ստամբուլում նույն ինստիտուտի կազմակերպած գիտաժողովում, եւ որտեղ նա ժխտում է Հայոց ցեղասպանությունը:**

# Դավիթ Հակոբյանը՝ Հակոբ Հակոբյանի դեմ

**Մալաթիա-Սեբաստիա համայնքի թիվ 8 ընտրատարածքում, Հակոբ Հակոբյանին պատգամավորական մանդատից զրկելուց հետո նշանակված ԱԺ մեծամասնական ընտրություններում Հակոբ Հակոբյանը նորից էր առաջադրվել: Երեկ հայտնի դարձավ, որ նրա հետ մանդատի համար պատրաստվում է նաեւ պայքարել Հայաստանի թիվ մեկ մարքսիստ Դավիթ Հակոբյանը: Երկուսն էլ Տեր-Պետրոսյանի համակիրներն են, թեեւ Դ. Հակոբյանի համակրանքների տատանումներ վերջերս գրանցվում էին:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 9/24/2009 9:43 PM Page 1



# ՀՀ ԿԲ նախկին նախագահ. «Մեզ պետք է սպասի մոտ 15 տոկոս անկում մինչեւ տարեվերջ»

ԵՊՀ դասախոս, Կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրյանը երեկ «Իրավունք դե ֆակտո» ակումբում անդրադառնալով ՀՀ տնտեսական իրավիճակին, նկատեց, որ այս տարվա 8 ամիսների տնտեսական ցուցանիշներն ավելի տխուր են, քան սպասելի էր:

«Այն կանխատեսումները, որ ես մի ամիս առաջ արեցի, թե օգոստոսի ընթացքում անկման տեմպը պետք է կրճատվեր՝ 1-1,5 %-ով, չարդարացան», նշեց Բ. Ասատրյանը:

«Եթե համեմատում ենք մեզ ԱՊՀ ուրիշ երկրների հետ, ապա արդյունաբերության անկումը ամենաբարձր տեմպերով Հայաստանում է տեղի ունենում: Սա ինձ համար եւս զարմանքի տեղիք է տալիս, որովհետեւ այն հիմնական գործոնները, որոնք պայմանավորում էին արդյունաբերության անցած տարվա անկումը՝ այսօր չկան», ասում է Բագրատ Ասատրյանը:




«Իմպորտի կրճատումը մեզ մոտ 7-8 ամիսների ընթացքում կազմում է 30 տոկոս, արդյունաբերության ծավալների կրճատումը՝ մոտավորապես 12 տոկոս: Առեւտուրն այս պարագայում աճում է: Սա ի՞նչ ֆենոմեն է. իհարկե, ասելու ենք ստվերային եւ այլն, ես ընդունում եմ: Բայց այդ ստվերը երկար ժամանակ չի կարող գործել, եւ մյուս տարվա որոշիչ գործոնը լինելու է անկումը առեւտրի ոլորտում: Որովհետեւ հնարավոր չէ, որ այդ մակրոգլոբալ թվերի պարագայում, իմպորտի եւ արդյունաբերության արտադրանքի անկման պարագայում առեւտուրը շարունակի աճել: Ես կարծում եմ, որ եթե իշխանությունների, կառավարության գործողությունները որոշակի դրական տեղաշարժերի հանգեցնեն շինարարության ոլորտում, որը խիստ կասկածելի է, ես չեմ տեսնում որեւէ նախադրյալ, որ արդյունաբերության ոլորտում էական դրական տեղաշարժեր լինեն: Սա նշանակում է, որ 2010-ին ՀՆԱ-ի անկմանը մենք պետք է սպասենք մոտավորապես 1.5-2 տոկոսի չափով»: Իսկ տարեվերջին ՀՆԱ անկումը կլինի 15%:

Հայաստանը հայ-թուրքական սահմանի բացման տնտեսական էֆեկտը կզգա լավագույն դեպքում երեք տարի անց. առաջին էֆեկտը կլինի Թուրքիայի օգտին, եւ Հայաստանը կորուստ կունենա, քանի որ սահմանի բացումից հետո թուրքական արտադրանքը կողողի Հայաստանի շուկան, որովհետեւ Թուրքիայի տնտեսությունն առավել ուժեղ է: Այսպիսի գնահատական տվեց Բագրատ Ասատրյանը:

«Եվրոպա-Թուրքիա հարաբերությունների չկարգավորման հիմքում ընկած է այս երկրի գյուղատնտեսությունը: Եվրոպայի վախն է, որ թուրքական ապրանքները կմտնեն եվրոպական շուկաներ եւ կքանդեն նրանց գյուղատնտեսությունը: Այս խնդիրը կա նաեւ Հայաստանի համար», հավելեց Բ. Ասատրյանը:

«Բայց անկասկած է, որ գլոբալ իմաստով Հայաստանը կշահի: Գլոբալ իմաստով ելքը սա է», ասում է Բագրատ Ասատրյանը՝ նշելով, որ անհնար է փակ սահմանով զարգանալը: Սակայն, նա միեւնույն ժամանակ նկատում է, որ սահմանի բացման վերաբերյալ խոսակցությունները բովանդակազուրկ են եւ, օրինակ, տնտեսական բաղադրիչը չի քննարկվում խորությամբ: Բագրատ Ասատրյանն ասում է, որ սահմանի բացման պարագայում հարկ է հստակեցնել մի քանի հարց: Օրինակ, արդյոք գործելո՞ւ է երկաթուղին, ի՞նչ հեռանկար է այն ունենալու, ինչ նշանակություն, արդյոք դադարելո՞ւ է Կարս-Ախալքալաք երկաթուղու շինարարությունը, Թուրքիան Հայաստանի սահմանը չի՞ բացելու միայն մարդատար երթեւեկի համար, իսկ բեռներ տեղափոխող մեքենաները, որ, ասենք, Եվրոպայից ապրանք կբերեն Հայաստան, կարող են հանկարծ հանդիպել արհեստական խոչընդոտների, ասենք՝ տերմինալի անպատրաստության կամ կշեռքի փչանալու պատճառաբանությունների տեսքով: Բագրատ Ասատրյանն ասում է, որ պետք է մտածել այդ հարցերի մասին եւ սահման բացել ասելով հասկանալ ոչ թե մարդկանց տեղափոխությունը, այլ ապրանքների ճանապարհի բացումը:

«Մենք դարձել ենք դոլարային մտածող երկիր, երբ մեր արտաքին առեւտրի կողմնորոշումն արդեն շատ վաղուց դոլարային շուկաները չեն», ասուլիսում հայտարարեց Բագրատ Ասատրյանը:

Մեր երկրի արտաքին առեւտրի կառուցվածքը հետեւյալն է՝ 40%-ը՝ եվրո, 30%ը՝ ռուսական ռուբլի, մնացյալ 30%-ը՝ միայն դոլար:

Ըստ բանախոսի վաղուց արդեն հարկավոր էր անցում կատարել ռուսական մոդելին՝ երկարժութային զամբյուղին, որով ներկայումս չափվում են ռուսական ռուբլու շարժերը: Մարտից մինչ օրս դրամի արժեզրկումը եվրոյի նկատմամբ կազմել է մոտ 25%, իսկ ռուբլու նկատմամբ՝ 20%, ակնհայտ է որ դրամը արժեզրկվում է: Ինչ վերաբերում է վերջին շաբաթների իրադարձություններին, ապա արտարժույթի կամ դոլարի վրա ճնշումը սկսվել էր ավելի շուտ՝ օգոստոսի վերջից:

«ԿԲ-ն կրկին դիմեց այն նույն քայլին, այն է՝ մեր արտաքին պահուստների վատնումը: Սեպտեմբերի առաջին շաբաթը մոտ 50-60 մլն դոլար ծախսելով՝ շուկայում կայունություն մտավ: Բայց վերջին օրերին եւս ԿԲ-ն կրկին շուկայում միջամտությունների դիմեց», ասաց բանախոսը:

«**Ազգի**» այն հարցին, թե դրսից վերցված վարկերի օգտագործման արդյունավետությունը որքանո՞վ է նկատելի այսօր ՀՀ-ում, Բագրատ Ասատրյանը նշեց. «Շատ ցածր է օգտագործման արդյունավետությունը: Այն մասը, որ վերաբերում է ռուսական վարկին, որը պետք է գնար տնտեսության փոքր եւ միջին բիզնեսին՝ ընդամենը 10 տոկոսի չափով է գնացել: Այսինքն, մենք ռեսուրսը ստացել ենք, վճարում ենք այդ ռեսուրսի համար, բայց չենք կարողանում օգտագործել: Որովհետեւ, ես կրկնում եմ, Հայաստանի տնտեսությունը փողի պահանջ չունի, բերեք մեր բանկային համակարգը, նայեք, իրացվելի միջոցների առկայությունը, լիքը փող ունենք, եւ դրսից փող բերելը ամենալավ վճիռը չէր, մանավանդ որ այսօր մեխանիզմ չկա այդ փողը արդյունավետ ծախսելու համար: Եթե փող ներդնելու տեղ լիներ, բանկերը կմտնեին այդտեղ, բայց մենք ունենք մի տնտեսություն, որտեղ հակաշուկայական կանոններ են աշխատում»:

ՆԱԻՐԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# «Չկա ազատ տնտեսություն, չկա նաեւ ազատ մամուլ»

«Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր **Արամ Աբրահամյանը** վստահ է, որ մինչեւ մեր տնտեսությունը ազատ չլինի արեւմտյան երկրների տնտեսությունների պես, մամուլն ազատ չի լինի, հետեւաբար մամուլն ազատ է այնքան, որքան՝ տնտեսությունն ու բիզնեսը: Աբրահամյանը նկատում է, որ Հայաստանում թերթերն ավելի ազատ են, քան հեռուստաընկերությունները: Պատճառն այն է, որ հեռուստաընկերությունները մեծ ազդեցություն ունեն լսարանի վրա, եւ խստորեն վերահսկվում են իշխանությունից: «Եթե, օրինակ, առաջին էջում տպագրեմ նախագահի գլուխը, ասենք, որեւէ կենդանու մարմնի հետ եւ տակը գրեմ՝ «արիկա», ես էլ լրագրության կարիք չունեմ. թերթը շատ լավ կվաճառվի: Բայց արդեն սահմանազատում է նկատվում որակյալ, լուրջ եւ այն թերթերի միջեւ, որոնք զբաղված են կուսակցական, քաղաքական PR-ով», Մամուլի ազգային ակումբում երեկ ասաց Աբրահամյանը՝ նշելով, որ իր խմբագրած թերթը պատկանում է առաջին խմբին:

«Առավոտի» խմբագիրը բացառում է իր թերթում հայհոյախառն հոդվածների հրատարակումը. «Հայհոյելը փաստարկի սով է, երբ դու փաստարկներ չունես, սկսում ես պիտակներ կպցնել, խաղալ մարդկանց էմոցիաների վրա, դու ինքդ ես ընկնում էմոցիաների մեջ», նկատեց Աբրահամյանը:

### «Հայ-թուրքական արձանագրություններում պլյուսներն ավելի շատ են, քան մինուսները»

Որեւէ որոշում ընդունելուց առաջ Արամ Աբրահամյանը խորհուրդ է տալիս մի թուղթ վերցնել, կիսել երկու մասի, մեկի վրա գրել «մինուս», մյուսի վրա՝ «պլյուս» եւ հաշվարկել՝ պարզելու, թե որն է գերակշռում: Աբրահամյանն այդպես է վարել հայ-թուրքական նախաստորագրված արձանագրությունները վերլուծելու ժամանակ եւ զուտ քաղաքացու տպավորությամբ ընկալել, որ պլյուսներն ավելի շատ են, քան մինուսները: Դրական գործընթաց կլինի, եթե արձանագրությունները ստորագրվեն հրապարակված տեսքով, վավերացվեն եւ իրականացվեն, սակայն այս առնչությամբ Աբրահամյանը որոշ մտահոգություններ ունի.

«Թուրքիայի կողմից դժվար վավերացվեն, իսկ վավերացվելու դեպքում դժվար իրականացվեն՝ առանց Ղարաբաղում զիջումների»: Անդրադառնալով Դաշնակցության կազմակերպած հացադուլին եւ ստորագրահավաքի՝ նկատեց. «Շատ կզարմանայի, եթե Դաշնակցությունը կողմ լիներ այդ փաստաթղթին, ուրեմն նա Դաշնակցություն չէր լինի: Բնական է, որ դավանելով Հայ դատի,




պահանջատիրության գաղափարախոսությունը, պետք է հենց այդպես էլ արձագանքեին»:

Արամ Աբրահամյանն էլ է մասնակցել լրատվամիջոցների խմբագիրների հետ նախագահի Սարգսյանի կազմակերպած հայ-թուրքական հարաբերությունների քննարկմանը: «Առավոտ» թերթի խմբագիրը տպավորություն է ստացել, որ նախագահն իր առջեւ նպատակ չէր դնում որեւէ մեկին ինչ-որ բան համոզելու: «Նա անկեղծորեն պարզաբանում էր տարբեր կետեր, բայց համոզելու որեւէ խնդիր դրված չէր: Ես, համենայն դեպս, որեւէ բանում չեմ համոզվել», ասաց նա:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ա. Վարդանյանի կարծիքով՝ առնվազն 10 զոհ է եղել մարտի 1-ին

Մարտի 1-ի դեպքերի ուսումնասիրման խորհրդարանական ժամանակավոր հանձնաժողովը որոշակի աշխատանք կատարել է, որը բավարար չէ: Հանձնաժողովը պետք է պարզեր՝ ովքե՞ր են մեղավոր 10 զոհերի համար, իշխանության գործողությունները համաչա՞փ են եղել, թե՞ ոչ: Հանձնաժողովը առանձին-առանձին չի արծարծել այս հարցերը: Իշխանությունների նպատակն է մոռացության մատնել եղածը եւ դրանով փակել մարտի 1-ի էջը: Երեկ նման հայտարարությամբ է հանդես եկել նույն հանձնաժողովի անդամ, ԱԺՄ ներկայացուցիչ **Արտավազդ Վարդանյանը**, որը չէր ստորագրել հանձնաժողովի զեկույցը:

Վարդանյանի կարծիքով, ոչ թե 10 զոհ է եղել մարտի 1-ին, այլ՝ առնվազն տասը. «Զաքար Հովհաննիսյանին ոստիկաններն են սպանել: Նա սպանվել է գիշերը 1-1.30 սահմաններում փակ շուկայի տարածքում, որն այդ ժամին շրջապատված է եղել ոստիկաններով»:

Վարդանյանը հրաժարվել է մեկնաբանել ԱԺՄ ղեկավար Վազգեն Մանուկյանի հայտարարությունը կուսակցությունից իրեն հեռացնելու մասին, ասելով, որ ինքը տեղյակ չէ նման որոշման:

Ն. Մ.

# Մսամթերքի շուկայում այլեւս գերիշխող դիրք ունեցող չկա

*Էթիլային սպիրտի շուկայում շարունակում է գերիշխել անվանումները փոփոխող նույն ընկերությունը*

Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի երեկվա նիստում քննարկվեցին մի շարք ապրանքային շուկաներում տիրող իրավիճակը: Մասնավորապես, մսամթերքի շուկայում մինչեւ 2008-ը գերիշխող էր համարվում «Գեղարդ մսամթերքի կոմբինատը»: Սակայն 2008-ին, հանձնաժողովի անցկացրած հետազոտություններով պարզվել է, որ այդ շուկայում գործող 33 ընկերությունների մեջ գերիշխող դիրք ունեցող չկա: Այստեղ իրացման առավել մեծ բաժին ունեն 3 ընկերություններ՝ «Լինդան»՝ 24,6 տոկոս, «Առդելիկատեսը»՝ 13,2 տոկոս եւ «Մուշը»՝ 10,9 տոկոս: Նրանցից ոչ մեկը շուկայում չունի գերիշխող դիրք, ուստի, հանձնաժողովի որոշմամբ, «Գեղարդ մսամթերքի կոմբինատը» հանվեց գերիշխողների գրանցամատյանից:

Մեկ այլ՝ էթիլային սպիրտի շուկայում 2004-ի տվյալներով 86 տոկոս բաժնով գերիշխող դիրք է զբաղեցրել «Ֆլիսֆուդ» ընկերությունը, որը 2007-ին լուծարվել է եւ հանվել ռեեստրից: 2006-ի տվյալներով գերիշխող դիրք ունեցող էր ճանաչվել «Սալեքս Գրուպ» ընկերությունը, որը գրավել է շուկայի 91 տոկոսը: Հանձնաժողովի ուսումնասիրությամբ, 2008-ին շուկայում ներկրում, արտադրություն, իրացում է իրականացրել 14 ընկերություն, որոնցից արտադրության ամենամեծ ծավալն ունի «Ալեքս Գրիգ» ընկերությունը՝ 78,8 տոկոսը, որը նաեւ իրացման շուկայում առավել մեծ ծավալն ունի՝ ավելի քան 99 տոկոս: Հանձնաժողովի որոշմամբ, «Ալեքս Գրիգ» ընկերությունը գրանցվեց գերիշխողների գրանցամատյանում, «Սալեքս Գրուպը» հանվեց գրանցամատյանից: Նշենք, որ այս ընկերությունները, ինչպես նաեւ «Ֆլիսֆուդը» պատկանում են միեւնույն անձին՝ ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանին:

Հանձնաժողովի երեկվա նիստում քննարկվեցին նաեւ այլ շուկաների ուսումնասիրության արդյունքներ: Մասնավորապես, տվյալների հաղորդման միջազգային տարանցման ծառայություն՝ ինտերնետ հասանելիության համար (մագիստրալ ինտերնետ) շուկայում գերիշխող դիրք ունեցող են ճանաչվել «Արմենտելը»՝ 53,9 տոկոս եւ «Ֆայբերնետ Քոմյունիքեյշնը»՝ 46,1 տոկոս: Իսկ թերթերի իրացման շուկայի գերիշխողը «Պրես Ստենդ» ընկերությունն է՝ 37 տոկոս մասնաբաժնով:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ, անդրադառնալով ապրանքային շուկաների կացությանը, հանձնաժողովի նախագահ **Աշոտ Շահնազարյանը** նշեց, որ հանձնաժողովի ուսումնասիրած շուկաներից 75-80 տոկոսում առկա է գերիշխող դիրք: Փաստելով, որ մեր ապրանքային շուկաներն ունեն բարձր կենտրոնացվածություն, Աշոտ Շահնազարյանն այն կարծիքը հայտնեց, որ դրա լուծումը կարող է լինել օրենքի խիստ կիրառումը, ինչպես նաեւ հակամենաշնորհային որոշ տարրերի իրականացումը:

Հայ-թուրքական սահմանի բացման մասին հարցին պատասխանելով, Աշոտ Շահնազարյանն ասաց, որ շուկաների կենտրոնացումը մի քանի ապրանքների գծով որոշ չափով կնվազի: Հանձնաժողովի նախագահի կարծիքով, սահմանի բացումը կակտիվացնի շուկան եւ դրական նշանակություն կունենա Հայաստանի համար, քանզի թուրքական ապրանքները Հայաստան անգամ փակ սահմանի դեպքում հասնում են, իսկ Հայաստանից Թուրքիա արտահանման հնարավորություններ չկան:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 9/24/2009 9:44 PM Page 1



# Տարածքային տարաձայնություններ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Ցեղասպանության ոճրագործությունը վաղեմության ժամկետ չունի: Երկրների միջեւ տարածքային տարաձայնություններն էլ անժամանցելի են, եւ երկու դեպքում էլ Հայաստանն ու հայերը հայցվորի իրենց դերերում են մնում` սպասելով դատարանում իրենց հարցի քննարկման օրվան:

Իսպանիան ուղիղ 500 տարի սպասեց, որ ներողություն խնդրի հրեաներից` 1492-ին երկրից նրանց վտարելու համար: Իսպանիայի Խուան Կառլոս թագավորը 1992-ին ի վերջո ընդունեց հրեաներին դաժանորեն վերաբերվելու իր երկրի մեղքը եւ հրապարակայնորեն ներողություն խնդրեց նրանցից:

Նրանից առաջ Գերմանիայի կանցլեր Վիլի Բրանդը Իսրայել էր գնացել, ծնկի եկել Յադ Վաշեմ սրբավայրում եւ մոտ կես դար անց իր կառավարության եւ ժողովրդի անունից ներողություն խնդրել ողջակիզումն իրականացնելու համար:

Հայերը մոտ մեկ դար սպասում են հատուցման օրվան: Բայց թուրքերն այնպիսի կատարյալ ձեւով են իրականացրել Ցեղասպանությունը, որ հայերը մինչեւ օրս ի վիճակի չեն եղել ուշքի գալ եւ հայց ներկայացնել Թուրքիայի դեմ: Ընդհակառակը, ոճրագործներն են դարձել միջազգային օրենքի եւ իրավունքի տերն ու տիրակալը եւ տարածքային պահանջներ ներկայացրել Հայաստանին: Թուրքիան, որպես ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ, սպառնում է Հայաստանին ղարաբաղյան հարցը Անվտանգության խորհրդի օրակարգում մտցնելու իր ցանկությամբ:

Թուրքիայի ղեկավարությամբ եւ օգնությամբ, եւ մի շարք մահմեդական երկրների համագործակցությամբ, Ադրբեջանն, իր հերթին, կարողացավ չպարտավորեցնող որոշում անցկացնել տալ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, որով «վերահաստատում էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը» եւ պահանջում, որ «հայկական ուժերը անմիջապես հետ քաշվեն բոլոր գրավյալ տարածքներից»:

Չնայած այս որոշումը զորություն չունի եւ չի կարող կիրառվել, որպես ազդու քարոզչության գործիք ծառայում է ազերիներին եւ թուրքերին համառորեն պնդելու, որ միջազգային օրենքն ու իրավունքը իրենց կողմն են: Դա նաեւ ցույց է տալիս, թե ինչքան մեկուսացված եւ անօգնական կարող է դառնալ Հայաստանը, երբ ճակատագրական պայմանների մեջ է գտնվում նա:

Թուրքերն ու ազերիները շարունակ պահանջում են, որ Ղարաբաղյան պատերազմի ընթացքում «գրաված տարածքները» վերադարձվեն իրենց անորոշ եւ շրջելի խոստումների դիմաց:

Թուրքիայում Քենան Էվրենի արյունալի իշխանության օրերին, ի պատասխան հայկական տարածքային պահանջների, բռնակալը պատասխանել էր, որ տարածքները չեն տրվում, այլ արյունով են վերցվում: Մենք հիմա նույն իրավիճակում ենք, մենք այդ տարածքներին ենք տիրացել արյուն թափելով, եւ ոչ մի ղարաբաղցի այդ հարցում չի ցանկանա փոխզիջումների գնալ:

Հակառակ որ գործնական արժեք կարող է չունենալ, ժամանակն է շրջելու իրավիճակը եւ հարցնելու Թուրքիային, թե ե՞րբ է պատրաստվում վերադարձնել պատմական հայկական տարածքները իր օրինական տերերին:

Ներկա «պահանջներ-հակապահանջներ» իրադրության լույսի ներքո երեւի ճիշտ կլինի Հայաստանի համար թուրքերին անորոշ վիճակում թողնել այն հարցում, թե Երեւանը շարունակելո՞ւ է, թե՞ թողնելու Կարսի պայմանագրով կորսված տարածքների վերադարձը:

Վերջերս չափազանց հետաքրքրական մի դեպք տեղի ունեցավ Հարավային Ամերիկայում, Բարիլոչեում (Արգենտինա) անցկացվող գագաթաժողովի (NASAR) շրջանակներում: Բոլիվիայի եւ Չիլիի նախագահները` Էվո Մորալեսն ու Միշել Բաշելեն հանդիպեցին գագաթաժողովից դուրս` քննարկելու կամ կարգավորելու տարածքային մի տարաձայնություն, որ 125 տարվա վաղեմություն ունի: Բոլիվիան Չիլիից դեռեւս պահանջում է իրեն վերադարձնել 1879-84 թվականների պատերազմի ժամանակ կորցրած այն նրբանցքը, որ երկիրը Խաղաղականին է կապում:

Նրանք, ովքեր կարծում են, որ պատմական Հայաստանի տարածքները ընդմիշտ կորած են, պետք է գոտեպնդվեն այն իրականությամբ, որ ժողովուրդները երբեք իրենց հույսը չեն կորցնում կարգավորելու իրենց պատմական իրավունքները, նույնիսկ 125 տարի անց:

Չնայած ժամանակի առումով որոշ նմանություններ կան հայկական եւ բոլիվիական պահանջատիրությունների միջեւ, այդ նմանությունները, սակայն, վերջանում են այնտեղ, երբ հաշվի ենք առնում, որ Չիլին այդ տարածքները նվաճել է հավասարների միջեւ մղված պատերազմի օրերին եւ ոչ թե Ցեղասպանություն է գործել թուրքերի նման:

Այսօր վերոնշյալ երկու երկրներում (Բոլիվիայում եւ Չիլիում) ժողովրդավարությունն է իշխում, եւ նրանք կարող են անցյալի դաշնությունները քննարկել իրար հետ ազատորեն, հատկապես երբ իրար կարիքն ունեն: Բոլիվիան ունի գազի երկրորդ ամենամեծ պաշարները Հարավային Ամերիկայում, իսկ Չիլին կարիքն ունի էներգիայի այդ աղբյուրների:

Այդ պատճառով էլ որոշ համաձայնության եկել են 2 կողմերը, թեեւ դեռ ոչ վերջնական: Պերուն, որի տարածքով պետք է անցնի այդ նրբանցքը, խանգարում է: Մինչ Բոլիվիան վերաշխուժացնում է իր պահանջները Ատակամա նրբանցքի նկատմամբ, Պերուն պնդում է, որ 1929-ին ստորագրված մի պայմանագրով ինքն էլ պետք է մասնակից դառնա երկու կողմերի միջեւ կնքված որեւէ համաձայնության:

Իրավիճակը որոշ առումով նման է Կարսի պայմանագրին, որը Թուրքիային է ճանաչում որպես Նախիջեւանի երաշխավորի, նշելով, որ Բաքուն չի կարող Նախիջեւանը զիջել մի երրորդ կողմի, ասենք, Հայաստանին, առանց Անկարայի համաձայնության:

Վերոնշյալ դեպքում Չիլին առաջարկում է անսահմանափակ, բայց ոչ գերիշխանական առափնյա հասանելիություն բոլիվյան գազի դիմաց, ինչ-որ նմանեցվում է երկար վիճարկումների տեղիք տված Իսլա Սուարեզ Իլհա դը Գուախարամիրիմ կղզու (Ռիո Մամորեյի վրա) պատմությանը, որը 1958-ից գտնվում է բոլիվյան վարչակազմի, բայց ոչ գերիշխանության ներքո:

Հայաստանի դեպքում, դժբախտաբար, տարածքային պահանջը չի պաշտպանված բնական ռեսուրսների առկայությամբ, որոնց կարիքն, ասենք, կզգան աշխարհի այլ երկրներ:

Արդարությունը մեր կողմն է: Մնում է հավաքագրել միջազգային զորակցություն եւ ինչեղություն տալ դրան, որպեսզի մեր իրավունքներն արդարացի լուծումներ ստանան:

Ինչպես վերոնշյալ դեպքերն են հուշում, մեր պահանջները երբեք չեն սպառվում, նույնիսկ այն ժամանակ, երբ մեր տոկունությունն է երբեմն տեղի տալիս:

**Անգլերենից թարգմանեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**
**«Արմինյն միրոր սփեքթեյթր»**

# 10 գլխավոր մտահոգություններ արձանագրությունների վերաբերյալ

***«Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանը շարունակում է իր մտահոգությունները շարադրել ստորեւ թարգմանաբար ներկայացվող հոդվածում:***

Նախորդ հոդվածներում ներկայացրել էի օգոստոսի 31-ին հրատարակված հայ-թուրքական արձանագրությունների հիմնական բացասական կողմերը: Մտահոգությունները վերաբերում էին երկու անընդունելի նախապայմանների, որոնցից մեկը Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչումն էր, իսկ մյուսը` մասնագետների համատեղ հանձնաժողովի ստեղծումը` քննարկելու պատմական արխիվները, որն այնքան էլ քողարկված ակնարկ չէր վերանայելու Հայոց ցեղասպանության հարցը:

Ստորեւ առավել հանգամանալից գնահատականս եմ ներկայացնում` նշելով տասը պատճառներ, թե ինչու Հայաստանի կառավարությունը չպիտի նախաձեռներ նման քայլ, եւ թե ինչու չպետք է ստորագրի եւ վավերացնի այս արձանագրությունները:

1) Հայաստանի ղեկավարները սխալվեցին` փորձելով միանգամից, մեկ համաձայնագրի միջոցով լուծել զգացմունքային հագեցվածությամբ մեծ թվով հայ-թուրքական խնդիրներ: Տասնամյակների հակասությունները չեն կարող այդպիսի շտապողականությամբ արծարծվել: Հայ պաշտոնյաները պետք է չափազանց զգուշորեն եւ աստիճանաբար գործեին` սկսելով դիվանագիտական հարաբերություններ հաստատելու պարզ քայլից, որին պետք է հաջորդեր սահմանի բացումը: Առավել բարդ խնդիրները պետք է թողնվեին հետագային:

2) Քանի որ այս բանակցությունների հայտարարված նպատակը Հայաստանի հետ սահմանի բացումն էր, որը Թուրքիան փակել էր 16 տարի առաջ, պատճառ չկար նման երկար ու բարդ բանակցություններ անցկացնելու եւ մշակելու մի փաստաթուղթ, որտեղ անկապ եւ անընդունելի պայմանները չափազանց շատ են: Ավելի խելամիտ կլիներ մեկ նախադասությամբ նախագիծ կազմել, որտեղ նշվեր, որ «Հայաստանն ու Թուրքիան համաձայն են դիվանագիտական հարաբերություններ հաստատել եւ հայտարարել, որ երկու երկրների ընդհանուր սահմանը կբացվի 2010 թվականի հունվարի 1-ից»: Իրականում նման մեկ նախադասությամբ համաձայնագիր ստորագրվել է Մ. Նահանգների եւ Թուրքիայի միջեւ 1927-ին, երբ դիվանագիտական հարաբերություններ էին հաստատվում այդ երկու երկրների միջեւ:

3) Հայաստանը չպետք է որեւէ զիջում աներ, որպեսզի Թուրքիային «հրապուրեր» բացելու իր սահմանը: Քանի որ Թուրքիան տասնամյակներ շարունակ հուսահատ քայլեր է անում անդամակցելու Եվրոմիությանը, նա այլընտրանք չունի, պետք է բացի Հայաստանի հետ սահմանը: Եվրոմիությունը պահանջում է, որ բոլոր անդամ երկրները բաց սահմաններ ունենան իրենց հարեւան երկրների հետ:

4) Շտապելով 1993-ին փակել իր սահմանը` Թուրքիան իրեն զրկեց մի կարեւոր լծակից, որը նա վերստին ձեռք կբերի, եթե բացի սահմանը: Եվ մի անգամ եւս Հայաստանի գլխին դամոկլյան սրի նման կկախվի սահմանը վերստին փակելու սպառնալիքը: Նման սպառնալիքը գործնական նշանակություն կունենա հատկապես, որովհետեւ Հայաստանի բնակչությունը մեծապես կախված է Թուրքիայից ներկրված էժանագին ապրանքներից եւ սննդամթերքից: Եթե ապագայում Թուրքիան որոշի ինչ-որ պատրվակով դարձյալ փակել սահմանը, Հայաստանի ղեկավարները չեն կարողանալու ուղղել երկրի շահերի դեմ կատարված սխալը, նույնիսկ եթե նրանք չեղյալ հայտարարեն արձանագրությունները:

5) Անցյալ շաբաթ վարչապետ Էրդողանը մի անգամ եւս նշեց, որ Թուրքիան չի բացելու Հայաստանի հետ իր սահմանը, մինչեւ ղարաբաղյան (արցախյան) հարցը չկարգավորվի: Հայաստանի ղեկավարները պետք է հայտարարեն, որ չեն ստորագրելու արձանագրությունները, քանի որ Թուրքիայի պաշտոնյաները հստակ հասկացրել են, որ մտադիր չեն պահել իրենց բաժին պարտավորությունները:

6) Թոշակի անցած թուրք դեսպան Յալիմ Էրալպը վերջերս մի հարցազրույցի ժամանակ հետաքրքրական եւ կարեւոր մի բացահայտում արեց: Նա նշեց, որ արձանագրությունների վավերացման ժամանակ Թուրքիայի խորհրդարանը կարող է հայտարարել, որ դրանք ուժի մեջ կմտնեն միայն ղարաբաղյան հակամարտության կարգավորումից հետո: Եթե նման պայման առաջադրեն թուրքերը, հայաստանյան խորհրդարանն էլ իր հերթին կարող է համապատասխան քայլ կատարել եւ պահանջել, որ արձանագրությունները ուժի մեջ մտնեն միայն այն բանից հետո, երբ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը, իսկ Ադրբեջանն էլ ճանաչի Արցախի հանրապետությունը:

7) Արձանագրությունները չեն ներառում որեւէ կոնկրետ թվական ստորագրման եւ վավերացման համար: Ստորագրման համար հաճախակի հիշվող կամ նշվող հոկտեմբերի 12-ը կամ 13-ը ամրագրված չեն արձանագրությունների տեքստում: Ուստի Հայաստանի կառավարությունը չպետք է շտապի ստորագրելու եւ վավերացնելու դրանք: Հայաստանի առաջնորդները դեռ կարող են փրկել իրենց երկրի շահերը: Թող Թուրքիան առաջինը թարթի աչքը:

8) Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն անցյալ շաբաթ հաստատեց, որ իրավական ոչ մի պահանջ կամ պարտավորվածություն չկա արձանագրությունները վավերացման համար խորհրդարան ներկայացնելու: Բայց նշենք, որ վավերացման դեպքում անհարկի կմեծանա Հայաստանի ազգային շահերին հասցված վնասը:

9) Հայաստանի կառավարությունը Թուրքիայի հետ երկար բանակցությունների ընթացքում ոչ մի փորձ չարեց խորհրդակցելու սփյուռքահայերի հետ, հակառակ որ արձանագրությունները շոշափում են համահայկական խիստ կենսական հարցեր: Ամիսներ առաջ, երբ որոշ կազմակերպություններ եւ անհատներ իրենց լուրջ մտահոգություններն արտահայտեցին արձանագրությունների նախնական տեքստի վերաբերյալ, Հայաստանի իշխանությունները պարզապես անտեսեցին այդ մտահոգությունները: Մետասաներորդ ժամին քննարկումներն անցկացնելու փորձերն ապարդյուն են, քանի որ Հայաստանի արտգործնախարարը հայտարարել է, որ արձանագրությունները փոփոխության չեն կարող ենթարկվել:

10) Երբ անցյալ շաբաթվա ընթացքում Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Երեւանում ավելի քան հիսուն հայկական քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ, հինգ ժամ տեւած «խորհրդակցությունը» անցավ փակ դռների հետեւում: Ցավոք, միայն նախագահի արտահայտած կարծիքները հրապարակվեցին: Հույս ունենք, որ երբ հոկտեմբերի սկզբներին նախագահ Սարգսյանը իր ծրագրած այցելությունները կկատարի եւ հանդիպումներ կունենա Փարիզի, Նյու Յորքի, Լոս Անջելեսի, Մոսկվայի եւ Բեյրութի հայկական համայնքների առաջնորդների հետ, այդ քննարկումները կլինեն ավելի բաց եւ թափանցիկ: Գերադասելի կլինի, որ դրանք նաեւ հեռասփռվեն:

***

Այս թեժ բանավեճի միակ չնախատեսված արդյունքն այն է, որ հայկական ամենատարբեր կազմակերպություններ միասնական դիրք բռնեցին ընդդեմ արձանագրությունների: Յուրաքանչյուրի լրջորեն փայփայած հույսն այն է, որ այս թեժ ներհայկական անհամաձայնությունը երկար չի տեւի, եւ Հայաստանի ղեկավարները կգտնեն խիզախությունն ու խոհեմությունը` հետ կանգնելու հայկական դատին վնաս հասցնող այս արձանագրությունները ստորագրելու եւ վավերացնելու իրենց որոշումից:

**Թարգմ. Հ. Ծ.**

**Խմբ. կողմից.-** *Հիշեցնենք, որ ՀԲԸՄիությունը, հայ եկեղեցու Մ. Նահանգների Արեւելյան եւ Արեւմտյան թեմերը, Ամերիկայի հայկական համագումարը եւ ՌԱԿ Մ. Նահանգների Արեւելյան շրջանը ու Կանադայի վարչությունը, որոշ մտահոգություններով հանդերձ, իրենց զորակցությունն արդեն իսկ հայտնել են ՀՀ կառավարության այս նախաձեռնությանը: Առաջիկա օրերին, վստահ ենք, կլինեն սփյուռքից նաեւ այլ դիրքորոշումներ` նվազ զգացմունքային:*

AZG NEW PDF.qxd 9/24/2009 9:45 PM Page 1



# «Եթե ստորագրվեն, ապա հոկտեմբերի 10-11-ին խորհրդարան կներկայացնենք արձանագրությունները»

## *Նյու Յորքի «Պրինստոն» համալսարանում հայտարարեց վարչապետ Էրդողանը*

Օր չի լինում, որ Նյու Յորքում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը երկկողմ հանդիպումներում կամ ելույթներում չանդրադառնա Հայաստանի հետ «հաշտեցման» գործընթացին: Թերեւս այդ առումով հատկանշականը նրա՝ «Պրինստոն» համալսարանում ունեցած ելույթն է: Այդ մասին նշել են թուրքական հանրային հեռուստատեսությունն ու «Սաբահ» թերթը:

Տեղեկության համաձայն, վարչապետ Էրդողանը համալսարանում հանդես է եկել «Գլոբալ խաղաղությունն ու Թուրքիայի արտաքին քաղաքականության տարածաշրջանային առաջնահերթությունները» թեմայով ընդգրկուն դասախոսությամբ, որի ընթացքում նա «ժողովրդավարեցման» նախաձեռնությունը գնահատելիս, ներկայացրել է նաեւ Հայաստանի հետ «հաշտեցման» գործընթացի խնդիրները, ասելով, որ իրենք պատրաստ են հայ-թուրքական արձանագրությունները Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի քննարկմանը ներկայացնել հոկտեմբերի 10-11-ին: Ի դեպ, Մեջլիսը հենց այդ օրերին է վերադառնում արձակուրդից, ուստի արձանագրությունները քննարկվելու են հետարձակուրդային առաջին նիստում:

Թուրքական հանրային հեռուստատեսությունն ու «Սաբահը» կայքէջերում ներկայացրել են միմիայն Թուրքիայի վարչապետի դասախոսության Հայաստանին վերաբերող հատվածը: Ահա թե ինչ են գրել. «Պրինստոնի համալսարանում վարչապետ Էրդողանը հանդես եկավ Թուրքիայի արտաքին քաղաքականության վերաբերյալ երկարաշունչ դասախոսությամբ:

### «Եթե արձանագրությունները ստորագրվեն, ապա դրանց տեքստը հոկտեմբերի 10-11-ին կներկայացնենք խորհրդարան»

Ելույթում Էրդողանն, անդրադառնալով նաեւ Թուրքիա-Հայաստան հարաբերություններին, հիշեցրեց, որ երկու երկրների հարաբերությունները մտել են նորմալացման շրջափուլ, դրա հետ կապված կան նախաստորագրված արձանագրություններ, իսկ անհրաժեշտ աշխատանքները դեռեւս շարունակվում են: Էրդողանը նշեց. «Աննախադեպ ոգեւորությամբ ծավալվում են Հայաստան-Ադրբեջան հանդիպումները: Շվեյցարիայի միջնորդությամբ չափազանց կարեւոր հանգրվանի ենք հասել Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ փոխադարձաբար կատարվող քայլերը: Եթե կանխակալ մոտեցումները դուրս չգան առաջին պլան, եւ քայլերի կատարումը չպայմանավորվի ներքաղաքական հաշվարկներով, ապա համոզված եմ, որ խորհրդարան կներկայացվի ներկա պահին նախաստորագրված արձանագրությունների տեքստը: Այսպիսով, հոկտեմբերի 10-11-ին արդեն կատարված կլինեն կարեւոր մյուս քայլերը»:

### «Պատասխան հանդիպման համար Սարգսյանը պետք է ժամանի Թուրքիա»

Վարչապետ Էրդողանը հիշեցրեց Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպման առթիվ նախագահ Աբդուլլահ Գյուլի Երեւան մեկնելու մասին, ասաց, որ Հայաստանի նախագահն էլ պատասխան խաղի համար պետք է Թուրքիա ժամանի: Այնուհետեւ Էրդողանն ավելացրեց. «Եթե Թուրքիայի նախագահը հեշտությամբ կարողանում է այցելել (ձեր երկիր), ապա կարող եք նաեւ դուք: «Եթե այս բանն անես, կգամ» ասելը միջազգային դիվանագիտության մեջ աղբաման նետված մտքերից է»:

### «Ժողովրդավարեցման նախաձեռնությունների շրջանակները չեն սահմանափակվում քրդական հարցով»

Անդրադառնալով միաժամանակ այդ նախաձեռնությանը, վարչապետ Էրդողանը նշեց, որ դա ընդգրկում է խնդիրների լայն շրջանակ՝ ներառյալ ալավիներին եւ այլ փոքրամասնություններին: «Քրդական հարցը այդ խնդիրներից մեկն է միայն: Ամենայն վճռականությամբ ձեռնամուխ ենք լինելու դրանց կարգավորմանը: Այս նպատակով ենք ճամփա ընկել: Եթե մեզ չհաջողվի միանգամից լուծել այդ խնդիրներն ամբողջությամբ, ապա կարգավորվածները՝ առավելագույնի, իսկ չկարգավորվածները՝ նվազագույնի ենք հասցնելու», ասաց վարչապետ Էրդողանը»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

# Խոջալուի «ցեղասպանության» մասին դասընթացներ Ադրբեջանի եւ այլ երկրների դպրոցներում

Ադրբեջանի կառավարության նախաձեռնությամբ ադրբեջանական դպրոցներում սկսվել է այսպես կոչված «Խոջալուի արդարություն. միջազգային աջակցության նախաձեռնություն» ակցիան: Ակցիայի նախաձեռնողն է երկրի նախագահ Իլհամ Ալիեւի դուստրը՝ Լեյլա Ալիեւան: Նպատակն է «Խոջալուի ցեղասպանության» մասին տեղեկացնել Եվրոպայի եւ Իսլամական կոնգրեսի անդամ պետությունների դպրոցականներին:

Ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբի երկու շաբաթվա ընթացքում պատմության դասաժամերին կներկայացվի «Խոջալուի ցեղասպանությունը», իսկ ինֆորմատիկայի դասաժամերին դպրոցականները կծանոթանան www.justiceforkhojaly.org կայքի ռեսուրսներին եւ կսովորեն օգտվել կայքից:

1news.az ադրբեջանական կայքի փոխանցմամբ՝ ծրագրի մեկնարկը տրվել է Բաքվի թիվ 6 դպրոցում, հաջողության դեպքում փորձը կկիրառվի մայրաքաղաքի եւ հարակից խոշոր քաղաքների միջնակարգ դպրոցներում: Նախ տեղի դպրոցականները կծանոթանան կայքից օգտվելու կանոններին, այնուհետեւ աշխարհի տարբեր դպրոցների իրենց հասակակիցներին կհրավիրեն ծանոթանալ «Խոջալուի ցեղասպանությանը»: Ադրբեջանցի դպրոցականները էլեկտրոնային փոստով կամ կհաստատեն ու «լրատվություն» կուղարկեն իրենց օտարերկրյա հասակակիցներին: Ադրբեջանական կայքէջը նաեւ վստահեցնում է, որ «Խոջալուի ցեղասպանության» մասին հրապարակումները կթարգմանվեն մի քանի տասնյակ լեզուներով:

Նախաձեռնությունը սկիզբ է առել այս տարվա փետրվարի 25-26-ին. աշխարհի 25 երկրում տեղի է ունեցել ծրագրի լայնամասշտաբ շնորհանդես: Միջոցառումների հիմնական կազմակերպիչը Հեյդար Ալիեւի անվան պետական հիմնադրամն է: Սակայն դրա իրականացմանն ու «Խոջալուի ցեղասպանության» կեղծ քարոզչությանն աջակցում են Ադրբեջանի պետական կառույցները, հասարակական կազմակերպությունները, սփյուռքն ու խոշոր քաղաքական կուսակցությունները՝ տրամադրելով գումար եւ անհրաժեշտ այլ միջոցներ: Հենց այդ օժանդակությամբ վերջին տարիներին համացանցը հեղեղված է «Խոջալուի ցեղասպանության» կեղծ քարոզչությամբ:

Զարմանալին այն է, որ հայկական կողմը ոչինչ չի ձեռնարկում ադրբեջանցիների ստահոդ պատմություններին ու մասնավորապես խոջալուական կեղծ քարոզչությանը հակադարձելու համար: Որեւէ պատմաբան կամ քաղաքագետ, ԱԺ պատգամավոր չի անդրադառնում խնդրին ու լուծման եղանակներ առաջադրում: Դրա փոխարեն ներիշխանական կռիվներ են, մեկին աթոռից գցելու ու «գահին» տիրելու ցանկություններ: Կա նաեւ կարծիք, որ հայկական կողմը լռում է՝ չնպաստելու ադրբեջանական ստահոդ քարոզչությանը, բայց կարծես հակառակն է ստացվում: Երեւի հայկական կողմի լռությունից գոտեպնդված ադրբեջանցիները շարունակում են ստել, համակարգված պետական քաղաքականություն վարում ու հավաստիացնում, որ հայերն ադրբեջանցիների նկատմամբ ցեղասպանություն են կատարել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Լվովի չեխ հյուպատոսը հեռացվել է ապօրինության համար

Լվովում Չեխիայի գլխավոր հյուպատոս Լադիսլավ Հրադիլը պաշտոնանկ է արվել եւ Արտաքին գործերի նախարարությունից հեռացվել է այցագրերի տրամադրման հետ կապված մեքենայությունների պատճառով: Այդ մասին հաղորդում է Корреспондент.net կայքէջը:

Սկանդալը պայթել է, երբ Ուկրաինայի 160 քաղաքացիներ դատի են տվել Չեխիայի ԱԳՆ-ին: Ուկրաինացիները դժգոհում էին, որ հյուպատոսությունում ընդունելության համար կարելի էր հերթագրվել միայն հատուկ հեռախոսային կենտրոնի միջոցով: Ըստ որում, հեռախոսազանգն արժեր մոտ 20 դոլար: Այդ անօրինական սխեմայով հետաքրքրվեցին Չեխիայի իրավապահ մարմինները: Նրանց տեսադաշտում հայտնվեց նաեւ Կիեւում Չեխիայի դեսպան Յարոսլավ Բաշտան:

Հեռախոսային կենտրոնը իր աշխատանքի ժամանակամիջոցում Չեխիա մեկնել ցանկացող ուկրաինացիների հաշվին ստացել է մոտ 360 հազար եվրո եկամուտ:

ՆՅՈՒ ՅՈՐՔ

# Մեդվեդեւ-Օբամա. «Մենք սովորել ենք լսել միմյանց»

## *Ելույթներ նաեւ ՄԱԿ-ի նստաշրջանում*

Նյու Յորքում բացված ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի 64-րդ նստաշրջանում ելույթ ունենալուց առաջ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հանդիպել է իր ամերիկացի պաշտոնակից Բարաք Օբամայի հետ: Զրույցի ժամանակ Մեդվեդեւը «անչափ խելամիտ» է անվանել Արեւելյան Եվրոպայում ամերիկյան հակահրթիռային համակարգի տեղադրումը հետաձգելու Սպիտակ տան որոշումը:

Ինտերֆաքս գործակալությունը մեջբերում է Մեդվեդեւի հետեւյալ խոսքերը. «Ռուսաստանը պատրաստ է տվյալ բնագավառում մանրամասն քննարկել ԱՄՆ-ի առաջարկությունները, ինչպես նաեւ մեր նախաձեռնությունները, որպեսզի հասնենք ընդհանուր եւ ընդունելի համաձայնությունների»:



Ինչ վերաբերում է Ռազմավարական հարձակողական սպառազինությունների նոր պայմանագրի կնքմանը, Մեդվեդեւի կարծիքով, այն կստորագրվի 2009-ի դեկտեմբերին:

Երկու նախագահները քննարկել են նաեւ Իրանի միջուկային ծրագրի հարցը եւ հանդիպումից հետո արտահայտվել են դրա դիվանագիտական լուծման օգտին, նշում է ՌԻԱ գործակալությունը: Անշուշտ, դա չի նշանակում, թե երկու նախագահները բացառում են Իրանի նկատմամբ ՄԱԿ-ի տնտեսական պատժամիջոցները խստացնելու հնարավորությունը:

Հանդիպումից հետո Մեդվեդեւը հայտարարել է. «Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հարաբերություններում սկսվել են դրական փոփոխություններ: Մենք սովորել ենք լսել միմյանց»: Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ նա ասել է, որ «առանձին դեպքերում պատժամիջոցների կիրառությունն անխուսափելի է»: CNN հեռուստաընկերությունը նշում է, որ Մեդվեդեւի խոսքերը վկայում են տվյալ հարցում ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի դիրքորոշումների մերձեցման մասին:

Մինչեւ վերջերս Մոսկվան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում դեմ էր արտահայտվել հակաիրանական պատժամիջոցների խստացմանը: Համանման դիրք էր բռնել նաեւ Պեկինը: Ռուսների դիրքորոշման փոփոխությունից հետո Չինաստանը Ախում փաստորեն մենակ է մնում: Լոնդոնի «Թայմս» թերթը ենթադրում է, որ այնուհետեւ Ախ-ում հակաիրական նոր պատժամիջոցների փաթեթի քննարկման ժամանակ Չինաստանը ստիպված կլինի ոչ թե վետո դնել, այլ ձեռնպահ մնալ:

Հանդիպումից հետո ՌԴ եւ ԱՄՆ նախագահները հանդես են եկել ՄԱԿ-ում հավաքված 120 պետությունների ներկայացուցիչների առջեւ: Մեդվեդեւի ելույթի որոշ մանրամասնություններ հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը: ՌԴ նախագահը հայտարարել է, որ նեոնացիզմի եւ 2-րդ աշխարհամարտի արդյունքների վերանայման փորձերի դեմ պայքարելը պետք է մնա ՄԱԿ-ի առաջնային խնդիրը:

«Ժամանակ առ ժամանակ գլուխ են բարձրացնում նեոֆաշիստական կազմակերպությունները: Կատարվում են հանցագործություններ ռասայական, ազգային կամ էթնիկական հողի վրա: Փորձեր են արվում արդարացնելու Հոլոքոստը, վերանայելու Նյուրնբերգյան դատարանի որոշումները», ասել է Մեդվեդեւը:

Օբաման ՄԱԿ-ի նստաշրջանում ունեցել է ծրագրային ելույթ՝ ասելով, որ ԱՄՆ-ը հրաժարվում է միաբեւեռ աշխարհից:

«Միջազգային համագործակցության նոր դարաշրջանը պետք է սկսվի հենց այժմ», հայտարարել է նա՝ ավելացնելով, որ «ընդհանուր մարտահրավերները պահանջում են ընդհանուր պատասխան»:

Նախագահի խոսքերով, մինչեւ օրս ԱՄՆ-ը գործել է միակողմանիորեն, անտեսելով ուրիշների շահերը: Դա առաջացնում էր «ռեֆլեքսային հակաամերիկանիզմ, որը շատ հաճախ ծառայեցվում էր որպես կոլեկտիվ անգործունության արդարացում»:

Ըստ Օբամայի, համագործակցության նոր փուլը պետք է հիմնված լինի «փոխադարձ շահագրգռությունների եւ փոխադարձ հարգանքի» վրա: ԱՄՆ-ը մտադրվել է համագործակցել ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունների հետ, որպեսզի պարտության մատնի «Ալ Ղաիդային» եւ դրա հետ կապված ծայրահեղական կառույցներին:

ԱՄՆ-ը պատրաստ է նաեւ իրականացնելու միջուկային զենքի կրճատումներ եւ Ռուսաստանի հետ կնքելու մարտագլխիկների եւ մղիչ հրթիռների կրճատման նոր համաձայնագրեր: «Մենք կձգտենք ընդլայնել միջուկային զենքի փորձարկումներն արգելող պայմանագիրը եւ այնպիսի դիրք կբռնենք, որը կհանգեցնի միջուկային զենքի առավել էական կրճատումների», հայտարարել է Օբաման:

# Ահմադինեժադ. «Կապիտալիզմը կարժանանա մարքսիզմի բախտին»

ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում երեկ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի ելույթի ժամանակ ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի պատվիրակությունները լքել են նիստերի դահլիճը: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ դա տեղի է ունեցել, երբ Իրանի ղեկավարը խոսել է «մոլի համաշխարհային կապիտալիզմի դարաշրջանի մոտալուտ ավարտի» մասին:

Ահմադինեժադի կանխատեսման համաձայն, «կապիտալիզմը կարժանանա մարքսիզմի բախտին»:

Ինչ վերաբերում է ելույթի մնացած մասին, Ահմադինեժադը չի արծարծել Իրանի միջուկային ծրագրի հարցը: Նախագահն ասել է, որ իր երկրի իշխանությունները միշտ պատրաստ են «բարեկամության ձեռք մեկնել ազնիվ եւ անկեղծ գործընկերներին»: Ահմադինեժադը նաեւ նշել է, որ Իրանը բոլոր «հալածված» երկրների պաշտպանն է:

Նախագահի խոսքերով, Իրանը պատրաստ է բոլոր ազգերի հետ համագործակցել միջազգային անվտանգության ապահովման հարցերում: Միեւնույն ժամանակ երկիրը կկասեցնի իր ազգային ինքնիշխանության դեմ ուղղված ամեն մի ոտնձգություն:

ՄԱԿ-ը Իրանի նկատմամբ բազմաթիվ տնտեսական պատժամիջոցներ է սահմանել նրա միջուկային ծրագրի պատճառով: Սակայն իրանցիները մտադիր չեն հրաժարվել ուրանի հարստացումից եւ պնդում են, որ իրենց ծրագիրը բացառապես խաղաղ բնույթ է կրում:

AZG NEW PDF.qxd 9/24/2009 9:45 PM Page 1



# Սրտի հետ խոսող գիրք

«Հայոց Մեծ եղեռնի չափածո պատմություն եւ փաստացի մեղադրանք» -ես այսպես կկոչեի օրերս լույս տեսած Մեծ եղեռնի եւ հայոց ազատամարտի «Ուխտասուն» թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ռազմական պատմաբան եւ հրապարակախոս, բանաստեղծ **ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ** «Քսանչորս ժամ Պոլսում» պատմափաստագրական պոեմը: Պոեմը թուրքական վայրագությունների ու կոտորածների մասին չափածո մենախոսություն է: Բանաստեղծը ներկայացնում է արյունարբու Թուրքիո խորհրդանիշ Պոլիսը, ուր սասունցի բանաստեղծը եղել է միայն 24 ժամ, 1983 թ.

**Պատերից պես պինդ, սեւ է երեսդ,**

**Պոռնկանոց է, հարեմ է ներսդ...**

Սասուն Գրիգորյանը բազմաթիվ հռետորական հարցեր է տալիս այդ երկերեսանի պոռնիկ քաղաքին եւ պատասխաններ չի էլ պահանջում, որովհետեւ իր հարցերի պատասխանները ինքը շատ լավ գիտի, գիտի, թե ով է թուրքը եւ որն է նրա հայակեր քաղաքականությունը՝ «... որոշված է հիմնովին բնաջնջել Թուրքիայում ապրող բոլոր հայերին՝ ուշադրություն չդարձնելով ոչ տարիքին, ո՛չ սեռին, ո՛չ խղճի խայթին...» (Թալեաթ), «Հայաստանը սրբել աշխարհի քարտեզից» (Քյազիմ Կարաբեքիր փաշա»): Եվ այսպես վայրագորեն էլ վարվեցին նրանք հայերի (եւ ոչ միայն հայերի) հետ՝ նպատակ ունենալով «մեկ հայ թողնել, այն էլ՝ թանգարանում»:

Ծավալուն չէ Ս. Գրիգորյանի «Քսանչորս ժամ Պոլսում» հայկական ռեքվիեմ- պոեմը՝ ընդամենը 422 տող: Բայց այն այնքան տարողունակ է, պատկերավոր ու բովանդակալից, որ ընթերցողը լիովին պատկերացում կկազմի այս մարդասպան ու մարդակեր ազգի մասին:

Բանաստեղծը մի ամբողջ օր շրջել է բյուզանդական այդ հինավուրց քաղաքում, որի շքեղ պալատներից ու տաճարներից շատերը հայ ճարտարապետներ են կառուցել.

**Մխ, Այա-Սոֆյա, հավերժող հրաշք,**

**Ո՞ւր է Տրդատը զարմանահրաշ...**

**Խոսեք, Պալյաններ, հայ կեսարացիք,**

**Այստեղ դուք քանի՞ պալատ հիմնեցիք,**

**Խոջա Սինանի հանճարը վկա,**

**Հայկական հրաշք այստեղ ո՞ւր չկա:**

Այնուհետեւ բանաստեղծը վերհիշում է իր կորցրած երկիրն ու հողը, իր Մուշն ու Սասունը, իր Կարսն ու Վանը, ամբողջ Արեւմտյան Հայաստանը, Հայոց բզկտված քարտեզը, ավելի քան երկու միլիոն հայերի եղեռնն ու տեղահանությունը, Սիամանթոյի, Վարուժանի, Սեւակի,




Զոհրապի, Կոմիտասի... ավելի քան 750 հայ մտավորականների աքսոր քշելն ու վայրաբարո հոշոտելը:

Սասնորդի բանաստեղծը լավատես է. նա հավատացած է, որ վաղ թե ուշ՝ «Կառնի հողն իր պապի, որ իր պապի հողում որդին պիտ ապրի...».

**Զոհրապ սպանես, Սեւակ, Վարուժան,**

**Մնաս անպատի՞ժ, դարավոր խուժան:**

Իսկ ո՞վ պետք է այդ վրեժը առնի...Պոեմի հեղինակը շատ լավ գիտի, որ հայոց արգանդը միշտ էլ եղել է սրբորեն բեղուն. նա նոր միհրներ, Սասնա ծռեր է ծնում, ծնում է նոր անդրանիկներ, նժդեհներ, դրոներ, սերոբներ, սոսեներ՝ վկա՝ արցախյան ազատամարտում կամովի կռված եւ զոհված մեր նոր քաջորդիք.

**Հրայր, Արաբո ելել են ոտքի,**

**Որ վրեժ լուծեն արնախում թուրքից:**

Սա է մեծ հայրենասեր բանաստեղծ, բազմաթիվ գրքերի, հոդվածների, հեռուստատեսային հաղորդումների, միաժամանակ ռազմապատմափաստագրական հանրագիտարանների հեղինակ Սասուն Գրիգորյանի հավատամքը Հայկական հարցի լուծման վերաբերյալ, անկախ նրանից, որ այսօր թուրքը իր միջազգային խաղերն է խաղում սեւացնելով հային ու Հայաստանը: «24 ժամ Պոլսում» պոեմ-ռեքվիեմում հեղինակը իր եւ իր ժողովրդի ջերմ սերն ու համակրանքն է արտահայտում Հայ դատը պաշտպանող օտարազգի դիվանագետների, գիտամշակութային գործիչների հանդեպ:

**Խոնարհվում եմ ես ձեր շիրմի առաջ՝**

**Ձեզնով ՀԱՅ ԴԱՏԸ չի ապրի նահանջ:**

Եվ վերջապես խիստ արդիական է հնչում Ս. Գրիգորյանի «Քո ռուս եղբոր հետ հավերժ զորացի՛ր» պատգամը: Նա ճիշտ է գնահատում նաեւ թուրքերի կողքին ապրող հայերիս իրավիճակը եւ ներկայիս մեր վայ հայրենասերներին հիշեցնում է մեր հայրենասեր հումանիստների (Իսրայել Օրի, Խաչատուր Աբովյան, Անդրանիկ, Հովհաննես Թումանյան, Կոմիտաս, Ավետիք Իսահակյան) պատգամները:

Այսօր էլ նույն բանն են ասում թե՛ Հայաստանի եւ թե՛ սփյուռքի խելացի այրերն ու մտավորականները: Վկայակոչենք թեկուզ միայն Սփյուռքի ազգային-հասարակական գործիչ, հրապարակախոս ու պատմաբան Հովհաննես Չիլինկարյանի (Ռուբեն Սեւակի եղբոր որդին) օրերս լույս տեսած գրքի հետեւյալ նախադասությունը՝ «Հայ ժողովուրդը չի հասկացաւ, որ Հայաստանի աշխարհագրական ու քաղաքական պայմաններու մէջ երէկ, այսօր եւ վաղը մեր միակ նեցուկը եւ փրկարարը ռուս ժողովուրդը կրնայ ըլլալ»:

Սասուն Գրիգորյանի չափազանց հետաքրքրական ու բովանդակալից գիրք-հուշագրությունը շքեղ տեսք ու գրավչություն են տալիս շնորհալի նկարիչ, Արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Հենրիկ Մամյանի թեմատիկ նկարազարդումները:

**ԽԱՉԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ**
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

# Ժենյա Այդինյան-Ռեզայե



Ցավագույժ բոթը ցնցեց բոլորիս:

Ժենյա Այդինյանը այլեւս մեզ հետ չէ:

Թվում է, դեռ երեկ էր իր շքեղ մուտքը Մաշտոցյան Մատենադարան եւ հազվագյուտ ձեռագրի նվիրատվությունը, որով նա դասվեց Մատենադարանի մեծ բարեգործների շարքը: Անմնացորդ նվիրումը, բարեգործությունը իր էությունն էր: Նա Հայաստանի մանկատների հիմնադրամի հիմնադիր նախագահն էր, հայ մշակույթի նվիրյալը:

Ցավակցում ենք բոլոր հարազատներին, բարեկամներին, հազարավոր հայ մանուկներին, որ գտնվում էին նրա խնամակալության տակ, եւ որոնց նա համարում էր իր հոգեզավակները:

Վիշտն անսփոփ է, բայց նրա պայծառ եւ լուսեղեն կերպարը միշտ ուղեկից կլինի մեզ մեր կյանքում ապրելու եւ ապրեցնելու իր աստվածատուր ձիրքով, որ վերածվել էր անձնազոհության:

Մնաս բարով, սիրելի բարեկամ.

Դու լույս ես տալու մեզ մեր կյանքի բոլոր օրերին:

**Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն**
**ՀՐԱՉՅԱ ԹԱՄՐԱԶՅԱՆ**

***

«**Ազգը**» իր վշտակցությունն է հայտնում Ժենյա Այդինյանի մահվան կապակցությամբ:

# Արժե զգույշ լինել ձեւակերպումների մեջ

**Ինքնաշիպ ու շատ սիրելի երաժշտի բարի համբավն է արդեն օրեր շարունակ ինձ հետ պահում բարձրաձայնելու մտորումիս մասին, բայց զգում եմ, որ չգրել, այնուհանդերձ, չեմ կարող: Արդեն տեւական ժամանակ է, ինչ «Շանթ» հեռուստատեսությամբ, օրական մի քանի անգամ մաեստրո Արթուր Մեսչյանի կատարումներից փոքրիկ հատվածներին հաջորդում է հոկտեմբերի վերջերին Մոսկվայում կայանալիք նրա մենահամերգի մասին հաղորդագրությունը, որը եզրափակվում է հետեւյալ...կերպ «համոզմունքով». «...Հանդիպում, որ կարող է փոխել հայ երգի մասին պատկերացումները»: Բնավ չեմ կարծում, թե այս արտահայտությունը՝ իր կամա թե ակամա ներառած ենթատեքստով, մաեստրոյի սրտով է, կամ նա Մոսկվա է գնում հայ երգի մասին պատկերացումներում... հեղափոխություն անելու: Համոզված եմ՝ նա գնում է երգելու, համոզված եմ՝ նրան սիրով ու անհամբերությամբ են սպասում: Բայց եթե ես, ասենք... հայ երգը ներկայացնողներից մեկը լինեի ու ճշմարիտ համոզմունք ունենայի, որ այդ գործում որոշակի կշիռ ու ձեռագիր ունեմ, ես, մեղմ ասած, կնեղանայի այդ «համոզմունքից», էլ չեմ խոսում հայ երգարվեստի բոլոր ժամանակների երեւելիների մասին: Խնդրանքս է՝ արժե զգույշ լինել ձեւակերպումների մեջ, անհարկի համեմատություններ չանել, վերաբերմունքը ընդգծելու, օգնելու փոխարեն, չարժե վնասել ու այլոց էլ հանիրավի նեղսրտելու (չասեմ՝ զայրանալու) առիթ տալ, մանավանդ, երբ զրույցն այդօրինակ մարդկանց անվան մասին է: «Կարող է փոխել»-ն, անկասկած, ճիշտ ու կոռեկտ... ափսեում չէր դրված. չէ՞ որ «Աստվածաշունչն» էլ չվնասելու մասին պատվիրան ունի...**

**Հետգրության փոխարեն. սիրելի՛ մաեստրո, ափսոսում եմ, որ իմ լրագրության մեջ ձեր անունը նմանօրինակ տեքստում շոշափեցի, որովհետեւ իմ մարդկային ու մասնագիտական երազանքներից է գոնե մի անգամ ձեզ հետ զրույցի նստելը...**

**ԼԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գորիս**

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

# Գաբրիելա Ուլուհոճյանի «Հայերը»՝ «լիակատար համայնագիտարան հայոց պատմության»

Այս կարծիքին է Կանադայում հրատարակվող եռալեզու «Ապագայ» շաբաթաթերթի հոդվածագիրը՝ «Յիպե» ստորագրությամբ, որ գրախոսել է 203 էջերից եւ չորս քարտեզներից բաղկացած վերոնշյալ հատորը:

Վերջին տասնամյակներում իտալերենով բազմաթիվ հատորներ են լույս տեսել հայերի մասին, պետեր, թարգմանություններ եւ ուսումնասիրություններ: Ուլուհոճյանի Gli Armeni («Հայերը») աշխատությունը, հակառակ համեմատաբար համեստ ծավալին, «Ցարդ իտալերէն լեզուով լոյս տեսած հայոց պատմութեան ամէնէն ամբողջական եւ կատարեալ հատորը կարելի է նկատել»: Հեղինակը, ըստ հոդվածագրի, ծանոթ եւ հարգված անուն է հայագիտական աշխարհում, 30 տարուց ավելի պարել է հայագիտական ամբիոնը Բոլոնիայի համալսարանի, որտեղ եւ դասավանդել է հայոց լեզու եւ գրականություն: Ունի բազմաթիվ հոդվածներ եւ հրատարակություններ: Լույս է ընծայել Սբ Բարսեղի կանոնների գիտական ուսումնասիրությունը եւ 2001-ին հայտնաբերել եւ շքեղ տպագրությամբ հրատարակել է հայկական վանքերի Երեմիա Չելեբիի պատրաստած քարտեզը:

«Հայերը» հատորի առաջին բաժնում հեղինակը տվել է Հայաստանի աշխարհագրական եւ պատմական ընդհանուր տվյալները: Երկրորդ բաժինը նվիրված է հայոց պատմությանը՝ Ուրարտու թագավորության ձեւավորումից մինչեւ Արշակունյաց թագավորություն, հասնելով մեր օրերը: Երրորդ բաժնում անդրադարձել է հայ եկեղեցու պատմությանը, հույն եւ լատին նվիրապետություններին հետ նրա անցած դժվարին հարաբերություններին եւ քրիստոնյա աշխարհում նրա բռնած համերաշխության անխոնջ քաղաքականությանը: Չորրորդ բաժնում է նա շուրջ 70 էջ նվիրել է հայ մշակույթին եւ նրա համամարդկային արժեքին՝ տալով պատմական մանրակրկիտ տեղեկություններ: Հինգերորդ եւ վերջին բաժինը նա նվիրել է ամբողջությամբ հայկական սփյուռքին:

Հավելյալ էջեր տրամադրված են աղբյուրների թվարկմանն ու անվանացուցակին: Գրքի հրատարակիչն է «Իլ Մուլինո» հրատարակչությունը: Տպագրվել է Բոլոնիայում, 2009 թվին:

Հ. Ծ.

# Վերաբերմունք-ինքնարտահայտում

**Բաղրամյան մետրոյի հարեւանությամբ Ռուսաստանի մշակույթի եւ գիտության կենտրոնի սենյակներից մեկում այս օրերին <u>Հրաչյա Արոյանը</u> ներկայացնում է փայտագործական աշխատանքների իր հավաքածուն: Հեղինակը խոստովանում է, որ արվեստի հետ կապ չունի եւ չի էլ ունեցել: Բայց մի օր այնպես է ստացվել, որ թողել է իր հիմնական աշխատավայրը՝ բանկային եւ ազգային անվտանգության համակարգում եւ փայտը ընտրել իբրեւ ինքնարտահայտման միջոց: Դա 1999 թվականի այն օրն էր, երբ ինքը հրաժարվեց աշխատանքի գնալ: Եվ ահա արդեն տասը տարի նա կյանքի զբաղմունք է դարձրել այս գործը: Ցուցադրությունն էլ հենց այդ տասնամյակին է նվիրված:**

**Փայտը նյութի առանձնականություն եւ «զգացողականություն» չունի, իրեն դժվար է հաղորդական դարձնել, այդ է պատճառը, որ այս նյութը ավելի օգտակար է դեկորատիվ կիրառական արվեստում: Հրաչյա Արոյանը, որ նաեւ ժողովրդական վարպետի կոչում ունի, իր մտային կոմպոզիցիաները արտահայտելու համար օգտագործել է խաչափայտի տարբեր ձեւեր՝ գեղազարդված իր ճաշակով: Աշխատանքների խորագիր-մակագրությունները խոսում են դրանց նվիրումների մասին: Խաչը, կրոնական, դոգմատիկ նշանակության խորհրդանիշից դուրս բերելով, հեղինակը օգտագործել է դա՝ որպես հավերժության նշան, որի գոյությունը հայտի է դարձել դեռ նախաքրիստոնեական շրջանից, ու այդ շրջանից սկսած մարդկության պատմության հսկայական ճանապարհից Հր. Արոյանը ընտրել է իր համար կարեւոր նկատված դրվագներ, իրողություններ, անհատներ՝ իր ներքին վերաբերմունքներն ուղղելով նրանց: Ահա Դոն Կիխոտը, որպես ասպետականության մշտապես փնտրված խորհրդանիշ, Քրիստափոր Կոլումբոսը՝ որպես ամերիկյան մայրցամաքի հայտնաբերումով Եվրոպան համաճարակներից փրկող, ջութակի մեծ վարպետները՝ Գվարներին, Ստրադիվարիուսը, մեծ կոմպոզիտորներ՝ Շոպենը, Չայկովսկին, Տրդատ թագավորը՝ իշխանական թագի քրիստոնեական խաչի առաջին կրողը, Ամենայն հայոց կաթողիկոսի ընդհանրական գաղափարը, աստվածաշնչյան տասը պատվիրանները, Հովհաննես Պողոս պապը՝ բռնի քրիստոնեացված էթնիկ ցեղերի հանդեպ իր վերաբերմունքի, Մարգրետ Թետչերը՝ 1988-ի Սպիտակի երկրաշարժի օրերին հայ ժողովրդի հանդեպ իր ուշադրության համար, Չարենցը, Շառլ Ազնավուրը եւ իհարկե՝ Հիսուս Քրիստոսը, նրա անցած երկրային ուղին-աշխարհիկ կյանքը, փավարանը եւ հաղթանակված մահվան խորհրդանիշը:**

**Աշխատանքներից մեկն անվանել է «Գալակտիկա»: Մեծ պայթյունը՝ տիեզերքի ընդարձակման սկզբի եւ գալակտիկաների ծնունդը, որը երեխայի ծննդի հետ է համեմատում՝ ճիչով ծնվող եւ ճիչով ապրող կյանք. այս ամենի մեկնաբանությունն ինքն է անում (առանց հեղինակային այս մեկնաբանության այլ ընկալում կլիներ): Հետաքրքրական էր նրա երազային քաղաքի ճարտարապետական մանրակերտը՝ փայտով եւ վիտենամական ծղոտով սարքած. այստեղ նրա գրադարանն է, օպերայի շենքը՝ միջնադարյան ոճի կառույցներով հեքիաթային մի քաղաք: Սա կյանքն ապրելու եւ դրսեւորվելու հեղինակի ընտրած եղանակն է:**

**Ս. Բ.**

# Քննարկում

Սեպտեմբերի 25-ին, ժամը 12.00-ին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում տեղի կունենա ֆրանսահայ բեմադրիչ, դերասան ու երաժշտագետ Ժիրայր Բաբազյանի (Փափազյան) հետ երաժշտագետների հանդիպում-քննարկում «Արշակ Երկրորդ», «Անուշ» օպերաների վերաբերյալ:

AZG NEW PDF.qxd 9/24/2009 11:09 PM Page 1



# «Արարատը» նվաճեց Սուպերգավաթը



ՖՈՏՈԼՈՒՐ

Երեկ «Հանրապետական» մարզադաշտում 2008-ի ֆուտբոլային մրցաշրջանի վերջին մրցանակը՝ Հակոբ Տոնոյանի անվան Սուպերգավաթը վիճարկեցին երկրի չեմպիոն «Փյունիկն» ու գավաթակիր «Արարատը»: Ըստ մրցակարգի, այդ հանդիպումը պետք է որոշեր նախորդ մրցաշրջանի ուժեղագույն թիմին: Սակայն 2008-ի համեմատ այսօր մրցող թիմերում, հատկապես «Արարատում», շատ բան է փոխվել, բացի այդ էլ հաշվետու հանդիպմանը մրցակիցները ներկայացան գրեթե փոխարինող կազմերով: Դա հատկապես վերաբերում է «Փյունիկին», որի կազմում մեծ թիվ էին կազմում պատանի ֆուտբոլիստները: Պատկերացում կազմելու համար ներկայացնենք մրցող թիմերի մեկնարկային կազմերը:

**«Փյունիկ»-Էդուարդ Հովհաննիսյան, Արտակ Եդիգարյան, Արթուր Յուզբաշյան, Վահե Ղասաբօղլյան, Արտակ Անդրիկյան, Արամ Հովսեփյան, Գագիկ Պողոսյան, Կամո Հովհաննիսյան, Նորայր Սահակյան, Մարկոս, Ալբերտ Հովակիմյան:**

**«Արարատ»-Գեւորգ Պրազյան, Ռաֆայել Սաֆարյան, Գորան Օբրադովիչ, Ռոման Հարկուշա, Վիրաբ Մեյթիխանյան, Դավիթ Գրիգորյան, Դեյան Սայնովիչ, Վալերի Ցիգանենկո, Հալեդ Ռաջաբ, Արթուր Պետրոսյան, Արտակ Գրիգորյան:**

Հանդիպումը շատ հաջող սկսվեց փյունիկցիների համար: Արդեն 6-րդ րոպեին բրազիլացի Մարկոսը մոտ 25 մետրից տուգանային հարվածով գնդակն ուղարկեց դարպասի վերին ձախ անկյունը: Այդ դրվագում այնքան էլ հաջող չխաղաց «Արարատի» դարպասապահը: Ինչեւէ, «Փյունիկը» հաշվի մեջ առաջ անցավ:

Բաց թողած գոլից հետո արարատցիները փորձեցին վերականգնել հավասարակշռությունը, սակայն նրանք շատ դանդաղ էին զարգացնում գրոհները, իսկ հարձակողական գործողություններում էլ սրություն չկար: Առաջին խաղակեսում կարելի է հիշատակել թերեւս երկու պահ: Անկյունայինի խաղարկումից հետո մոտ տարածությունից Դավիթ Գրիգորյանի հարվածը հետ մղեց «Փյունիկի» դարպասապահը, իսկ Ցիգանենկոյի հեռահար հարվածը որսաց:

Ընդմիջումից հետո արարատցիները զգալիորեն աշխուժացրին հարձակողական գործողությունները եւ դրանք անմիջապես արդյունք տվեցին: Ընդամենը 5 րոպեում Արտակ Գրիգորյանը երկու անգամ գրավեց «Փյունիկի» դարպասը եւ առաջ մղեց «Արարատին»:

Արարատցիներին հաջողվեց մինչև խաղավերջ դարպասը պահել անառիկ և հանդիպումը հասցնել հաղթական ավարտի: Այսպիսով, «Արարատն» առաջին անգամ նվաճեց Սուպերգավաթը՝ ռեւանշի հասնելով 1997թ. «Փյունիկից» կրած պարտության դիմաց: Խաղից հետո Հակոբ Տոնոյանի թոռը պատվավոր մրցանակը հանձնեց «Արարատի» ավագ Արթուր Մինասյանին: Շնորհավորելով արարատցիներին սուպերգավաթակրի կոչմանն արժանանալու առթիվ, հուսանք, որ նրանց կհաջողվի նաև պահպանել տեղը բարձրագույն խմբում:

# Քրիստիանու Ռոնալդուն արդարացնում է սպասելիքները



**Իսպանիայի առաջնության 4-րդ տուրում Մադրիդի «Ռեալը» 2-0 հաշվով հաղթելով «Վիլյառեալին», 12 միավորով ընթանում է 2-րդ տեղում: Նույնքան միավոր ունի նաեւ «Բարսելոնը», որը հյուրընկալվելիս 4-1 հաշվով պարտության մատնեց «Ռասինգին» ու շնորհիվ խփած եւ բաց թողած գնդակների ավելի լավ տարբերության, գլխավորում է աղյուսակը:**

**«Ռեալ»-«Վիլյառեալ» խաղում մի քանի նշանակալի իրադարձություններ տեղի ունեցան: Նախ, թիմի կազմում Իսպանիայի առաջնություններում անցկացրած խաղերի քանակով (524) ռեկորդակիր դարձավ «Ռեալի» 32-ամյա հարձակվող Ռաուլը: Նա գերազանցեց թիմի նախկին պաշտպան Մանոլո Սանչիսի ռեկորդային ցուցանիշը:**

**«Ռեալի» կազմում Իսպանիայի առաջնություններում իր անդրանիկ գնդակը խփեց բրազիլացի Կական: 73-րդ րոպեին նա 11 մ հարվածով կրկնապատկեց հաշիվը: Եվ վերջապես նոր ռեկորդի հեղինակ դարձավ «Ռեալի» մյուս նորեկ, պորտուգալացի Քրիստիանու Ռոնալդուն, որն արդեն 2-րդ րոպեին գրավեց «Վիլյառեալի» դարպասապահ Դիեգո Լոպեսի պաշտպանած դարպասը: Ռոնալդուն դարձավ «Ռեալի» առաջին նորեկը, որն Իսպանիայի առաջնության մեկնարկային չորս տուրերում դաշտից չի հեռանում առանց գոլի: Հիշեցնենք, որ Ռոնալդուն մեկական գնդակ էր խփել «Դեպորտիվոյի» եւ «Էսպանյոլի» դարպասները, 2 անգամ աչքի էր ընկել «Խերեսի» հետ մրցավեճում: Բացի այդ, պորտուգալացի ֆուտբոլիստը 2 գոլ էր խփել շվեյցարական «Ցյուրիխի» դարպասը չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մեկնարկային խաղում: Այսպիսով, «Մանչեսթր Յունայթեդի» նախկին «աստղը» «Ռեալում» արդեն 7 գոլի հեղինակ է դարձել: Այնպես որ Ռոնալդուն իրեն լիովին արդարացնում է Իսպանիայում եւ փոխհատուցում է իր վրա «Ռեալի» կատարած խոշոր ծախսերը:**

**Եվս մեկ ուշագրավ փաստ: «Ռեալի» ներկայիս գլխավոր մարզիչ Մանուել Պելեգրինին նախորդ մրցաշրջանում գլխավորում էր հենց «Վիլյառեալը»: Փաստորեն, Պելեգրինին հաղթեց իր նախկին սաներին:**

# Ժյուստին Էնենը վերադառնում է կորտ

**Պրոֆեսիոնալ թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման նախկին առաջատար, բելգիացի անվանի թենիսիստուհի Ժյուստին Էնենը հայտարարել է կորտ վերադառնալու մասին: Նա այդ առթիվ իր մարզչի՝ Կառլոս Ռոդրիգեսի հետ մամուլի ասուլիս է կազմակերպել:**

**«Վերջին 15 ամիսներին ինձ հաջողվեց վերականգնվել, ուստի պատրաստ եմ վերադառնալ կորտ: Ինձ մոտ արժեքների վերագնահատում է տեղի ունեցել, ավելի իմաստուն եմ դարձել եւ ցանկանում եմ կրկին մրցել հակառակորդներիս հետ, որոնց կարոտել եմ», հայտարարել է Էնենը:**

**Նրա մարզիչը տեղեկացրել է, որ կորտ վերադառնալու հիմնական նպատակներից մեկն Ուիմբլդոնի մրցաշարում հաղթելն է: Մարզական իր հարուստ կարիերայում Էնենը 42 մրցաշարի հաղթող է ճանաչվել, սակայն մինչ օրս նրան չի հաջողվել ուժեղագույնը դառնալ Ուիմբլդոնում:**

**Թենիսի մասնագետների համար Էնենի որոշումն այնքան էլ անակնկալ չէր: Երբ անցյալ տարվա մայիսին Բեռլինում Դինարա Սաֆինայից կրած պարտությունից հետո Էնենը հայտարարել էր թենիսին հրաժեշտ տալու մտադրության մասին, շատերը գտնում էին, որ նա կվերադառնա կորտ: Բացառված չէ, որ Էնենի որոշման վրա դրական ազդեցություն է ունեցել իր հայրենակցուհի Կիմ Կլիյստերսի հաջողությունը վերջերս ավարտված թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնությունում, որտեղ նա հաղթող էր ճանաչվել՝ որոշ ընդմիջումից հետո կրկին վերադառնալով կորտ: Ի դեպ, Կլիյստերսը հավանություն է տվել Էնենի որոշմանը: Ամեն դեպքում, Էնենի վերադարձն ավելի կուռ մրցակցությունը կանանց մրցաշարերում:**

ՇԱԽՄԱՏ

# Կարպովը կրկին սպառեց ժամանակը

**Իսպանիայում ընթացող Կասպարով-Կարպով շախմատային մրցախաղի 2-րդ օրը կայացան արագ շախմատի եւս 2 պարտիաներ, որոնցում հաղթեցին սպիտակները: Այսպիսով, մրցախաղի հաշիվը դարձավ 3-1՝ հօգուտ Կասպարովի: Այժմ մրցակիցները 8 պարտիայից բաղկացած կայծակնային մրցախաղ կանցկացնեն:**

**Երկու անընդմեջ պարտություններից հետո Կարպովին հաջողվեց ուշքի գալ եւ 3-րդ պարտիայում հաղթանակ տոնել: Թեեւ այդ պարտիայում էլ Կարպովի ժամանակը սուղ էր, սակայն այս անգամ նա հստակ քայլերի շնորհիվ առավելության հասավ: Իսկ ահա Կասպարովը մի քանի կոպիտ սխալներ թույլ տվեց ու ստիպված էր 36-րդ քայլին հանձնվել:**

**4-րդ պարտիայում սպիտակներով խաղում էր Կասպարովը: Համարյա հավասար դիրքում 33-րդ քայլին Կարպովը սպառեց ժամանակը եւ նրան հերթական պարտությունը գրանցվեց: Փաստորեն, կրկնվեց առաջին պարտիայի պատմությունը: Ինչպես երեւում է, 58-ամյա Կարպովը շատ է հուզվում եւ չի կարողանում «տեղավորվել» պարտիայի համար հատկացված ժամանակում: Նշենք, որ յուրաքանչյուրին հատկացվում է 25 րոպե գումարած 5 վրկ ամեն քայլի համար:**

**«Խաղասեղանի շուրջը նստելիս հուզվում էի այնպես, ինչպես 25 տարի առաջ, երբ 21 տարեկանում Կարպովի հետ վիճարկում էի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Սակայն խաղը սկսելուն պես հանգստանում էի: Իսկ մրցակիցս գուցե չկարողացավ դա անել: Բնավ էլ չեմ մտածում այս մրցախաղի վերջնական արդյունքի մասին, քանի որ իմ առջեւ խնդիր չի դրված կրկին վերսկսել ելույթներս: Պարզապես վերջին տարիներին զրկվել էի այն զգացումներից, որ ինձ պարգեւում էին շախմատային մրցախաղերը», հայտարարել է Կասպարովը պարտիայի ավարտից հետո:**

# Արդյունավետ տուր

**Անտվերպենի շախմատի մրցաշարի 6-րդ տուրն աչքի ընկավ բացառիկ արդյունավետությամբ: Բոլոր հինգ պարտիաներն էլ ավարտվեցին կողմերից մեկի հաղթանակով: Ցավոք, նրանց թվում չէր Գաբրիել Սարգսյանը, որը մրցաշարում 2-րդ պարտությունը կրեց՝ զիջելով Կրիշնան Սաշիկիրանին: Գաբրիելը 3 միավորով Աննա Մուզիչուկի հետ բաժանում է 5-6-րդ տեղերը:**

**Առաջատարի դիրքերն ամրապնդեցին Էմիլ Սուտովսկին եւ Էթիեն Բաքրոն՝ հաղթելով համապատասխանաբար Միխելսին եւ Մուզիչուկին: Սուտովսկին 5 միավորով միանձնյա գլխավորում է աղյուսակը: Նրան կես միավոր է զիջում Բաքրոն: 3,5-ական միավորով 3-4-րդ տեղերը բաժանում են Կրիշնան Սաշիկիրանն ու Անտոանետա Ստեֆանովան: Վերջինս պարտության մատնեց Հովելին: Թիմանն առավելության հասավ Սոչկոյի նկատմամբ եւ վաստակեց 2,5 միավոր: Աղյուսակը 0,5 միավորով եզրափակում է Հովելը:**

# Ազատ ոճային ըմբիշները ձախողվեցին

**Դանիայում իրենց մրցավեճն ավարտեցին աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկող ազատ ոճային ըմբիշները: Հայաստանից մրցագորգ դուրս եկած 7 ըմբիշներից եւ ոչ մեկին չհաջողվեց մրցանակակիր դառնալ: Մեր վերջին ներկայացուցիչ, 74 կգ քաշային Սուրեն Մարկոսյանն էլ անհաջողության մատնվեց: Առաջին գոտեմարտում հաղթելով վրացի ըմբիշ Գելա Սագիրաշվիլուն, Սուրենը 1/8 եզրափակիչում զիջեց բուլղարացի Կիրիլ Թերզիեւին: Վերջինս հաջորդ փուլում պարտություն կրեց հնդիկ Բամեշ Կումարից, ուստի Մարկոսյանը զրկվեց պայքարը շարունակելու հնարավորությունից: Քաշային այս կարգում չեմպիոն հռչակվեց ռուսաստանցի Դենիս Ցարգուշը՝ եզրափակիչում պարտության մատնելով ադրբեջանցի Շամսալվար Շամուլվարաեւին:**

**Թիմային հաշվարկով Հայաստանի հավաքականը 8 միավորով ղազախների հետ բաժանեց 15-16-րդ տեղերը: Հաղթող ճանաչվեց Ռուսաստանի հավաքականը (63 միավոր): 2-րդ տեղում ադրբեջանցիներն են (48), 3-րդ հորիզոնականը զբաղեցրեց Իրանի ընտրանին (40): Լավագույն տասնյակում տեղ գրավեցին նաեւ Թուրքիայի (27), Ուկրաինայի (23), Բելառուսի (21), ԱՄՆ-ի (19), Ուզբեկստանի (18), Վրաստանի (14) եւ Հնդկաստանի (14) հավաքականները:**

**Այժմ մրցապայքարը կտրամադրվի կանանց եւ հունահռոմեական ոճի ըմբիշներին: Այս ոճի Հայաստանի ըմբիշները սովորաբար վատ հանդես չեն գալիս, ուստի գոնե նրանցից պետք է մեդալներ ակնկալել:**

# «Լեւսկին» խաբեության զոհ դարձավ

Բուլղարական «Լեւսկի» ֆուտբոլային թիմը բուքմեյքերների խաբեության զոհ դարձավ: Թիմի առանցքային 4 ֆուտբոլիստներ չմասնակցեցին Սոֆիայի ԲԿՄԱ-ի հետ հանդիպմանը, որում «Լեւսկին» զիջեց 0-2 հաշվով: Իսկ ասիական բուքմեյքերները խոշոր խաղադրույքներ էին ընդունել ԲԿՄԱ-ի հաղթանակի դիմաց:

Բանն այն է, որ դեռեւս հանդիպումից մի քանի օր առաջ «Լեւսկի» ակումբում հայտնվել էր Կազանի «Ռուբինի» պաշտոնական նամակը, որում տեղեկացվում էր բուլղարական թիմի ֆուտբոլիստների՝ մակեդոնացի Դարկո Տասեւսկու, բրազիլացի Զե Սոարեսի, բուլղարացի Ժիվկո Միլանովի եւ մարոկկացի Յուսուֆ Ռաբեխուի նկատմամբ ռուսական թիմի հետաքրքրասիրության մասին: Առաջարկվում էր 4 մլն եվրո նրանց տրանսֆերի համար:

Ըստ նամակի, ֆուտբոլիստները պետք է ԲԿՄԱ-ի հետ խաղի օրը մեկնեին Մոսկվա՝ բժշկական հետազոտության: Սակայն հետագայում «Ռուբինի» ներկայացուցիչ ներկայացած անձը զանգահարում եւ հայտնում է, որ ակումբը նախատեսվածից 2 անգամ ավելի ցածր աշխատավարձ կարող է տալ այդ չորս ֆուտբոլիստներին: Բնականաբար, վերջիններս հրաժարվում են տեղափոխվել «Ռուբին»: Այս ամենից վրդովված, «Լեւսկու» գործադիր տնօրենը փորձում է զանգահարել «Ռուբինի» նախագահին, սակայն նամակում նշված հեռախոսահամարը կողմնակի անձի էր պատկանում: Այսպիսով, բացահայտվում է խաբեությունը: Մինչդեռ բուլղարական լրատվամիջոցներն էլ շատ լուրջ էին ընդունել այդ ամենը: «Ռուբինին» մնում էր պաշտոնապես հայտարարել, որ կատարվածի հետ ակումբը ոչ մի կապ չունի: Իսկ «Լեւսկին» պատրաստվում է հետաքննություն սկսել եւ գործը հանձնել դատախազությանը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Հայաստանում խոզի գրիպի համաճարակ չկա եւ չի եղել

Արդեն մեկ շաբաթ է, ինչ «Ազգ» օրաթերթ են զանգահարում, նաեւ էլեկտրոնային փոստով հարցումներ հղում սփյուռքից մեր հայրենակիցները, ճշտելու այն տեղեկատվությունը, որ Հայաստանից ինչ-որ անձինք տարբեր անձանց ու կառույցների անունով նամակներ են հղում ու տարածում, որ մեր երկրում շատ տարածված է խոզի գրիպը, կան մահվան դեպքեր, եւ խորհուրդ են տալիս չայցելել Հայաստան:



«**Ազգ**ը» խնդրեց ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ հակահամաճարակային տեսչության գլխավոր մասնագետ, ԱՀԿ-ի կողմից ճանաչված գրիպի համաճարակաբանական հսկողության կոորդինատոր **Լիանա Թորոսյանին** ներկայացնել մեր հանրապետությունում տիրող իրավիճակը: «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շրջանում H1N1 վիրուսով հարուցված գրիպի առումով համաճարակային իրավիճակը հանգիստ է: Հանրապետությունում շարունակվում է վարակի ներբերման ու տարածման կանխարգելմանն ուղղված հակահամաճարակային միջոցառումների իրականացումը: Շարունակվում են նաեւ հանրապետության սահմանային գոտիներում ուղեւորների առողջական վիճակի զննումը, ջերմաստիճանների ավտոմատ չափումները, նաեւ մոնիտորինգի իրականացումը», նշեց տկն Թորոսյանը: Առիթից առողջապահության նախարարությունում ձեւավորվել է շտաբ, ու տարվում են համապատասխան միջոցառումներ:

Մասնագետը նշեց, որ Ա տեսակի H1N1 գրիպի համաճարակային իրավիճակը աշխարհում դեռեւս շարունակվում է, արձանագրվել է 300.000 դեպք, որոնցից 3500-ը մահվան ելք են ունեցել: Իրավիճակը հանգիստ չէ նաեւ մեր տարածաշրջանում, դեպքեր են արձանագրվել Վրաստանում, Ադրբեջանում, Իրանում:

Օդակաթիլային վարակի թափանցումը կանխելու համար լուրջ աշխատանքներ է տանում գրիպի կանխարգելման շտաբը: «Մինչեւ օրս, մենք հարցումների եւ ջերմաչափի երկու սարքերի միջոցով հայտնաբերել ենք 6 ջերմող անձի, որոնք եկել էին այն երկրներից, որտեղ գրիպի H1N1 վիրուսային վարակի տեսակետից եղել են անապահով, այդ կասկածելի հիվանդները մեկուսացվել են ու տեղափոխվել Նորքի ինֆեկցիոն հիվանդանոց: Նրանց նկատմամբ իրականացվել է լաբորատոր հետազոտություն», նշեց տկն Թորոսյանը:

Կասկածյալ հիվանդները 2-3 օրից դուրս են գրվել հիվանդանոցից, նրանց նկատմամբ դեռ բժշկական հսկողությունը շարունակվում է:

Առողջապահության նախարարությունն համագործակցում է հանրապետության գրեթե բոլոր կառույցների հետ, տրամադրում համապատասխան նյութեր՝ ճիշտ պայքար կազմակերպելու համար: «Այսօր հանրապետությունում առկա է հակավիրուսային պատվաստուկի «Տամիֆլու» անհրաժեշտ պաշար, որը տրամադրվել է տեղական ու մարզային բուժհիմնարկներին, որպեսզի կասկածելի հիվանդների նկատմամբ համապատասխան բուժումն ապահովվի:

Տկն Թորոսյանը «**Ազգին**» պատասխանելով նշեց, որ սեզոնային գրիպը խոզի գրիպից ախտանշաններով չի առանձնանում, դրանք շատ նման են իրար: Մասնագետը հորդորեց, որ բարձր ջերմություն, մկանային ցավ, քթնարտադրություն, թուլություն, կոկորդում ցավեր նկատելիս անմիջապես դիմել բուժհիմնարկներին, որտեղ հետազոտություններն ու բուժումը իրականացվելու են անվճար: Ոչ մի դեպքում ինքնաբուժմամբ չզբաղվել, հորդորեց մասնագետը:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

# Մահացել է Օսմանյան կայսրության վերջին արքայազնը

**Ըստ Panorama.am-ի՝ ինքնունյութ տարեկան հասակում մահացել է Օսմանյան կայսրության վերջին արքայազնը՝ Էրթօղրուլ Օսման Օսմանօղլուն: Ինչպես տեղեկացնում է «Սի Էն Էն թյուրք» հեռուստաընկերությունը, նա մահացել է երիկամային անբավարարությունից:**

**Օսմանօղլուն ծնվել է 1912 թվականին, Առաջին աշխարհամարտի տարիներին տեղափոխվել է Վիեննա եւ հաճախել բարձրագույն դպրոց: 1924-ին Թուրքիայից վտարումից հետո Օսմանօղլուն հաստատվում է ԱՄՆ-ում, ստեղծում իր գործը: 67 տարի վտարման մեջ մնալուց հետո օսմանցի արքայազնը Ստամբուլը առաջին անգամ կարողանում է տեսնել 1991-ին:**

**Օսմանօղլուն Էրդողանի հրամանով Թուրքիայի քաղաքացիություն էր ստացել 2004-ին:**

**Ն.Մ.**

ԾԱՆՈՒՑՈՒՄ

# Կենտրոնական բանկի խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը սեպտեմբերի 22-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահի Արթուր Ջավադյանը, որոշեց փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Բանկերի եւ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի եւ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը եւ գրանցումը» կանոնակարգ 1-ում, «Վարկային կազմակերպությունների գրանցման ու լիցենզավորման, վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների գրանցման, վարկային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելուն համաձայնություն տալու, վարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորման ու գրանցման կարգը, վարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգը, վարկային կազմակերպությունների գործունեության վայրի եւ տեխնիկական հագեցվածության պահանջները» կանոնակարգ 13-ում, «Ապահովագրական եւ ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, ՀՀ տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի եւ ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ձեւը, ներկայացման կարգը եւ ժամկետները, ապահովագրական ընկերության եւ ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության եւ որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման եւ որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում, «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների եւ օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձեւը եւ ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում, «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձեւը եւ ժամկետները» Կանոնակարգ 5/01-ում եւ «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձեւը եւ ժամկետները» կանոնակարգ 5/02-ում:

Փոփոխություններ կատարվեցին «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձեւավորման եւ հաշվարկման կարգը» կանոնակարգ 3/02-ում:

Խորհուրդը որոշեց «ԱՄԱԼԻԿ ԿՐԵԴԻՏ» ՍՊԸ-ին տրամադրել գրավատան կազմակերպման լիցենզիա եւ հաշվառել «Կվադրակոմ» ՍՊԸ դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպության թիվ 14, թիվ 15, թիվ 16, թիվ 17, թիվ 18, թիվ 19, թիվ 20, թիվ 21, թիվ 22, թիվ 23, թիվ 24, թիվ 25, թիվ 26, թիվ 27, թիվ 28, թիվ 29, թիվ 30, թիվ 31, թիվ 32, թիվ 33 եւ թիվ 34 մասնաճյուղերը:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

# ԿԲ կողմից կառուցվող բաղադրյալ տնտեսական ինդեքսների վերաբերյալ

**2005 թ. սկզբից ՀՀ կենտրոնական բանկը նախաձեռնել է ոչ ֆինանսական, ֆինանսական կազմակերպությունների եւ տնային տնտեսությունների եռամսյակային հարցումներ: Հարցումների նպատակն է. (ա) գնահատել ներկա տնտեսական վիճակի փոփոխությունը նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ, (բ) գնահատել հետազոտվող սուբյեկտների տնտեսական սպասումները, (գ) հարցումների արդյունքների հիման վրա հաշվարկել եւ հրապարակել բաղադրյալ տնտեսական ինդեքսներ:**

**Ընթացիկ եռամսյակում ընտրանքային սկզբունքով հետազոտվել է արդյունաբերության, շինարարության եւ ծառայությունների ոլորտների 841 կազմակերպություն: Հարցման է ներգրավվել նաեւ 1847 տնային տնտեսություն Երեւան քաղաքում եւ ՀՀ բոլոր մարզերում: Հարցումներն իրականացվել են ինտերնետի, հեռախոսակապի, նամակների եւ ֆաքսի միջոցով: Հարցումների արդյունքների հիման վրա հաշվարկվել են գործարար միջավայրի, տնտեսական ակտիվության եւ սպառողների վստահության ինդեքսներ: Տնտեսական ակտիվության ինդեքսը հաշվարկվում է թողարկման ծավալների, արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի եւ պաշարների վերաբերյալ կազմակերպությունների սպասումների միջինացման միջոցով, իսկ գործարար միջավայրի ինդեքսը՝ ռիսկերի եւ ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ կազմակերպությունների գնահատականների միջինացման միջոցով: Սպառողների վստահության ինդեքսը ստացվում է ընթացիկ պայմանների ինդեքսի (նախորդ եռամսյակի համեմատ խոշոր գնումներ կատարելու, եկամուտների փոփոխության եւ ներկա տնտեսական պայմանների վերաբերյալ գնահատականների միջին) եւ ապագա պայմանների ինդեքսի (գալիք եռամսյակում գնումներ կատարելու, եկամուտների եւ զբաղվածության փոփոխության սպասումների միջին) միջինացման միջոցով:**

**Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արդեն ձեւավորվել են բաղադրյալ տնտեսական ինդեքսների վերաբերյալ բավարար թվային շարքեր, ներկայացված են վերջիններիս արժեքները՝ հաշվարկած ինչպես նախորդ տարվա նույն եռամսյակի, այնպես էլ 2009-ի երկրորդ եռամսյակի նկատմամբ: Միեւնույն ժամանակ նշենք, որ նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ հաշվարկված ինդեքսները տնտեսության փաստացի միտումներն առավել ստույգ են բացատրում, քանի որ բացառվում է սեզոնային տատանումների գործոնը:**

| Բաղադրյալ տնտեսական ինդեքսներ | 2009թ. երկրորդ եռամսյակ | | 2009թ. երրորդ եռամսյակ | |
|---|---|---|---|---|
| | Նախորդ եռ. նկատմամբ | Նախորդ տարվա նույն եռ. նկատմամբ | Նախորդ եռ. նկատմամբ | Նախորդ տարվա նույն եռ. նկատմամբ |
| Տնտեսական ակտիվության ինդեքս | 118.3% | 71.8% | 109.0% | 94.9% |
| Գործարար միջավայրի ինդեքս | 112.0% | 76.5% | 125.9% | 95.9% |
| Սպառողների վստահության ինդեքս | 95.8% | 87.7% | 103.0% | 86.7% |

**Ինչպես տեսնում ենք վերը բերված աղյուսակից, ընդհանուր առմամբ նախորդ եռամսյակի համեմատությամբ, տնտեսությունում նկատվել են բարելավման միտումներ:**

**Ինդեքսների հաշվարկման համար տրվող հարցերը կրում են որակական բնույթ եւ ունեն պատասխանների հետեւյալ տարբերակները. «աճ», «անփոփոխ մակարդակ», «նվազում»: Պատասխանների հիման վրա հաշվարկվում է յուրաքանչյուր տարբերակի տեսակարար կշիռը պատասխանների ընդհանուր քանակում, այնուհետեւ դրական պատասխանների տեսակարար կշռին գումարվում է չեզոք պատասխանների կշռի կեսը՝ ստանալով պատասխանների հաշվեկշիռները: Հաշվեկշիռները տատանվում են [0, 100] միջակայքում: Հաշվեկշռի 0 արժեքը խոսում է այն մասին, որ բոլոր ռեսպոնդենտները նշել են նվազում, 100 արժեքը՝ աճ, իսկ 50 արժեքը՝ կայուն վիճակ (աճ եւ նվազում ակնկալող հարցվողների քանակը հավասար է): Որպես կայուն մակարդակ ընդունել ենք հաշվեկշռի տատանումը 45-ից մինչեւ 55-ը: Պատասխանների հաշվեկշիռները հարաբերելով բազիսային ժամանակաշրջանի համապատասխան հաշվեկշռին՝ ստանում ենք վերջնական ինդեքսները:**

**Բաղադրյալ տնտեսական ինդեքսների պատասխանների հաշվեկշիռները**

| | 2008թ. | 2009թ. | |
|---|---|---|---|
| | 3-րդ եռ. | 2-րդ եռ. | 3-րդ եռ. |
| Տնտեսական ակտիվություն | 65.3 | 56.9 | 62.0 |
| Գործարար միջավայր | 49.3 | 37.6 | 47.3 |
| Սպառողների վստահություն | 51.6 | 43.4 | 44.7 |

***ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 23.09.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: